

ՆԱԽԱԳԱՅ ԱՌՈՒ ԱՍԹԱՆԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԳՑԵԼՈՒ ՉՐԱԷՐ ՄԸ ՍՏԱՅԱՒ



Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երեկ նախագահական պալատին մեջ ընդունեց Ռուսիոյ նախագահի յատուկ պատուիրակ Ալեքսանտր Լաւրենթիւը՝ ընկերակցութեամբ Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկեյ Վերշինինի եւ ռուսական դիւանագիտական պատուիրակութեան, որոնց միացաւ Նաեւ Լիբանանի մեջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Չասիփիքին:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն Լաւրենթիւ-էն ստացաւ հրաւեր մը՝ մասնակցելու Արթանայի խորհրդաժողովին: Ան յայտնեց, որ Լիբանան պիտի ընդառաջէ մասնակցելու այդ խորհրդաժողովին, որուն ընթացքին պիտի քննարկուի Սուրիոյ տագնապին լուծումը:

Նախագահ Աուն նշեց, որ Արթանայի խորհրդաժողովը կը դիւրացնէ Սուրիոյ տագնապին խաղաղ լուծում գտնելու համար ի գործ դրուող բոլոր ջանքերը՝ Նկատել տալով, որ Սուրիոյ տագնապին քաղաքական լուծման շնորհիւ կարելի պիտի ըլլայ սուրիացի տեղահանուածներուն տունդարձը:

Այս շրջագիծին մեջ, նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանանի մեջ կան աւելի քան մեկուկէս միլիոն սուրիացի տեղահանուածներ, որոնց ներկայութիւնը երկրին մեջ տարբեր բնագաւառներուն վրայ ունեցած է իր հետեւանքները:

«Արթանայի խորհրդաժողովին մասնակցութիւնը չի չեղոցանք տեղահանուածներու տունդարձին գծով սուրիական պետութեան հետ բանակցելու Լիբանանի իրաւունքը», ընդգծեց նախագահ Աուն: Ան բարձր գնահատեց Ռուսիոյ ցուցաբերած զօրակցութիւնը՝ աւելցնելով, որ անկիւա շինիչ եւ Նպաստաւոր ազդակ մըն է Լիբանանին համար՝ սուրիացի տեղահանուածներուն տունդարձը կազմակերպելու առումով:

Անդրադառնալով տեղական ներկայ իրադարձութիւններուն՝ նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանանի վայելած քաղաքական եւ ապահովական կայունութիւնը, լիբանանեան քաղաքական կեանքին վերադարձած քաղաքական-կազմակերպական աշխուժութիւնը, երկրին տնտեսական կացութիւնը բարելաւելու իմաստով կառավարութեան ճիգերը ողջունելի են:

Նախագահ Աուն դրուատեց Լիբանանի եւ Ռուսիոյ միջեւ գործակցութեան կարեւորութիւնը եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին՝ Լիբանանի նկատմամբ անոր ցուցաբերած հետաքրքրութեան եւ գուրգուրանքին համար:

Ան ողջոյնները փոխանցեց Փութինին՝ ընդգծելով լիբանանեան-ռուսական յարաբերութիւններն ու բոլոր մարզերուն մեջ գործակցութիւնը ամրապնդելու կարեւորութիւնը:

Իր կարգին, Լաւրենթիւ բարձր գնահատեց օրին նախագահ Աունի Մոսկուա կատարած այցելութեան արդիւնքները՝ Լիբանանին մաղթելով յաւելալ կայունութիւն եւ բարգաւաճում:

Ան ընդգծեց, որ Մոսկուա իր կարգին կը ցանկայ ամրապնդել լիբանանեան-ռուսական երկկողմանի յարաբերութիւնները եւ բարձր կը գնահատէ շրջանին մեջ Լիբանանի որդեգրած չափաւորական կեցուածքները:

Լաւրենթիւ շեշտեց, որ Ռուսիա ամէն ջանք ի գործ պիտի դնէ Միջին Արեւելքի կայունութեան համար՝ աւելցնելով, որ Սուրիացի տեղահանուածներուն տունդարձը Արթանայի խորհրդաժողովին քննարկուելիք առանցքներէն մէկը պիտի ըլլայ:

Շար.ը՝ Էջ 10

ՌՈՒՍՏԱՄ ԲԱՂԱՍԵԱՆ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի նախագահի հրամանագիրով Ռուստամ Բաղասեան նշանակւած է արդարադատութեան նախարար:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկը՝ համաձայն Սահմանադրութեան 131-րդ յօդուածին, ինչպէս նաեւ «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունեութեան մասին» օրէնքի 5-րդ յօդուածի առաջին մասին՝ Ռուստամ Բաղասեանը նշանակել արդարադատութեան նախարար», նշուած է հրամանագիրին մէջ:

Յիշեցնենք, որ 7 յունիսին արդարադատութեան նախարարի պաշտօնէն հրաժարական տուաւ Արտակ Չէնալեանը:



ԷՐՏՈՂԱՆ. «ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԵՆ ԲԱՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵՆՔ ՍՈՒՐՍԻԻ ՀԱՐՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԴԱՏԵԼՈՒ ԵԳԻՊՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտնեց. «Անոնք, որոնք Էրտողանի Եգիպտոսի հանգուցեալ նախագահ Մոհամետ Մուրսիի նման ճակատագիր կը նախատեսեն, Եգիպտոսի նախագահ Ապտէլ Ֆաթթահ Սիսիի մտայնութեան հետեւող մարդիկ են»:

«Մենք անոնցմէ չենք վախնար, որովհետեւ հազած ենք մեր պատանքները եւ այս ուղին որդեգրեցինք», ըսաւ ան:

Էրտողան նշեց. «Դժբախտաբար Մուրսիի քսան վայրկեան դատարանի տրախին գետինը մահուան դէմ պայքարեցաւ, եւ



պատասխանատուները չմիջամտեցին անոր օժանդակելու»:

Թուրքիոյ նախագահը Իսլամական համագործակցութեան կազմակերպութեան կոչ ուղղեց՝ «Մոհամետ Մուրսիի մահուան նկատմամբ իր պարտաւորութիւնները կատարելու»:

Կազմակերպութիւնը անպայման անհրաժեշտը պետք է կատարէ:

«Պիտի հետեւինք անոր մահուան վերաբերեալ զարգացումներուն եւ անհրաժեշտ ամեն բան պիտի կատարենք Եգիպտական իշխանութիւնները միջազգային դատարաններու մէջ դատելու համար», ըսաւ Էրտողան:

ԵԳԻՊՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ. «ԷՐՏՈՂԱՆ ԲՈՆԱՊԵՏ Ե ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՅԵՐՈՒՄ ԱՆՈՐ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵՐԺԵԼԻ»

Եգիպտոսի խորհրդարանի բանբեր Սալահ Հասապալա հակադարձեց Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի՝ Եգիպտոսի Նախկին նախագահ Մոհամետ Մուրսիի մահուան վերաբերեալ կատարած յայտարարութիւններուն, զանոնք Նկատելով «Եգիպտոսի հարցերուն լկտի միջամտութիւն»:

«Եգիպտացի ժողովուրդը 30 յունիս 2013-ի մեծ յեղափոխութիւնը զգեստող հարուածով մը վերջ տուաւ Էրտողանի երազներուն ու անոր սատանայական ծրագիրներուն եւ զինք վերածեց Եգիպտոսի, անոր ժողովուրդին ու ղեկավարին թիւ մէկ թշնամին», ըսաւ Հասապալա:

Եգիպտոսի խորհրդարանի բանբերը Էրտողանը Նկատեց «Մենատէր մը եւ բռնապետ մը, որ իր ժողովուրդին ու իր քաղաքական ընդդիմադիրները կ'անիրաւէ: Ան խալիֆայութեան պետութեան

կերտման իր երազներուն ծախողութեան մատուցելէն եւ չարիքի, Իսլամ եղբայրներ խմբաւորումով ներկայացուած խաւարի ու ահաբեկչութեան ուժերուն հետ դաշնակցելով Թուրքիոյ բանտերը վերածեց սպանդանոցներու»:

«Այդ անպիտան խմբաւորման տապալումէն ետք Էրտողան սուր յարձակողականի դիմեց Եգիպտոսի դէմ՝ արտասահմանի մէջ Եգիպտոսի պատկերը աղաւաղելու ծախող փորձով մը: Սակայն ամբողջ աշխարհը ամբողջովին կը գիտակցի, թէ Եգիպտոսը մեծ պետութիւն մըն է, որ հերոս ղեկավար նախագահ Ապտէլ Ֆաթթահ Սիսիի ղեկավարութեան ռազմիրայական ու առանցքային դերակատարութիւն ունի շրջանային ու միջազգային հարցերու մէջ», նշեց Եգիպտոսի խորհրդարանին բանբերը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆԸ ԱՐՅԱԽԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԿՆՔՈՒՄԸ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՋՆՋՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՁԷ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԷՆ

Կը ցաւիմ, որ Ֆրանսայի ներքին գործոց նախարարը Ֆրանսայի եւ Արցախի քաղաքներուն միջեւ կնքուած բարեկամական հռչակագիրները դարձուցած է քաղաքական հարց՝ նա հանգապետները մղելով դատարանի մէջ վիճարկել գտնուք: Այս մասին «Թերթ»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է Ֆրանսայի Ազգային ժողովի հայազգի անդամ Տանիէլ Ղազարեան՝ անդադառնալով Ֆրանսայի եւ Արցախի քաղաքներուն միջեւ ստորագրուած բարեկամական հռչակագիրներու ջնջման:

«Նախ եւ առաջ կ'ուզեմ ընդգծել, որ դատարանի ոչ մէկ որոշում կրնայ կասեցնել այդ քաղաքներուն միջեւ գոյութիւն ունեցող անկեղծ բարեկամութիւնը», ըսած է ան:

Ան նշած է, որ ինք նաեւ չի հասկնար, թէ ինչպէս կրնան այդպիսի բարեկամական հռչակագիրները որեւէ ձեւով հարցականի տակ դնել տուեալ տագնապին առնչուած ազգի անհրաժեշտ չեղողութիւնը:

«Մեր ժողովուրդները միաւորող կապերը համահունչ են այս իրավիճակի հանգուցալուծման ուղղուած Ֆրանսայի դիւանագիտական ջանքերուն՝ հաշուի առնելով յատկապէս, որ Ֆրանսան ամուր կապեր կը պահպանէ շահառու միւս կողմի՝ Ազդրպէյճանի հետ: Եւ ներքին գործոց նախա-



րարէն պիտի խնդրեմ բացատրել մանրամասնութիւնները», ըսած է ան:

Տանիէլ Ղազարեան նաեւ յիշատակեց, որ ինք կ'անդամակցի Ֆրանսա-Արցախ բարեկամական խումբին, որ կը միաւորէ խորհրդարանի Լեռնային Ղարաբաղի տագնապի արդար եւ խաղաղ լուծման աջակցող անդամները՝ ի նպաստ Արցախի ժողովուրդի անվտանգութեան ու զարգացման:

«Մենք բանակցութիւններ պիտի վարենք, որպէսզի ընդհանուր արձագանգի հասնինք նաեւ խորհրդարանին մէջ: Եթէ հետագային կարելիութիւն ընձեռուի իրական տեսանկիւնէն անվտանգ դարձնել բարեկամական այդ հռչակագիրները, եւ հաստատապէս կողմ պիտի ըլլամ այդպիսի լուծման: Որովհետեւ քաղաքականութեան մէջ խիստ բարձր են գրունները, մենք կարիք ունինք աշխատանքներ տանելու կուսակցութիւններու որդեգրած քաղաքական գիծերուն ուղղութեամբ՝ ցոյց տալու համար, որ խաղաղութիւնը, անվտանգութիւնը եւ Արցախի ժողովուրդի բարեկեցութիւնը կուսակցական հարցեր չեն, եւ ոչ ալ՝ որեւէ կողմի արտօսութիւնը միւսի նկատմամբ: Անկիւա կարծիքովս այս խնդիրին անորոշառնալու ամենէն պատասխանատու ճամբան է», ըսաւ ան:

ԱԶՐԱՊԵՅՃԱՆ, ԿՐԱՍԱՆ ԵՒ ԹՈՒՐԵԱ ՄԻԱՑԵԱԼ ՈԱԶՄԱՓՈՐՁԵՐ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵՆ

Ազրպէյճանի զինեալ ուժերու զինուորական խաղերու կեդրոնին մէջ Ազրպէյճանի, Թուրքիոյ եւ Վրաստանի զինուորներու մասնակցութեան տեղի ունեցած է «Յաւիտենականութիւն-2019» իրամասնատարա-սպայակոյտային ռազմափորձերու հարցով խորհրդաժողովը: Այս մասին կը հաղորդէ ազրպէյճանական «Մինվալ» կայքը:

Ձեռնարկին ժամանակ երեք երկիրներու համապատասխան կառոյցներու ներկայացուցիչները քննարկած են ռազմափորձերու պատրաստուելու հետ առնչուած հարցեր եւ խնդիրներ: Կը նշուի, որ ռազմափորձերը նւիրուած են շրջանին մէջ տնտեսապէս կարեւոր նախագիծերու պահպանման կազմակերպման:

ՎԱՐԴԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՅԱԽ ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆ ՈՒՉԵՐ, ԲԱՅՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻԶՈՎ ԶԵՆ ԿՐՆԱՐ ՄԵՉ ՎԱԽՑՆԵԼ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազգային ժողովի նիստին յայտարարած է, թէ Հայաստանն ու Արցախը պատերազմ չեն ուզեր, բայց «պատերազմի սպառնալիքով ռեւէ մէկը չի կրնար մեզ վախցնել»:

«Պատերազմը չէ աւարտած, որեւէ ատեն կրնայ բռնկիլ, իրավիճակի լարում ըլլալ: Ազրպէյճանը պարզապէս կ'ուզէ կիրարկել Նոյն գործիքը, որ երկար ժամանակ կիրարկած է՝ փորձել դուրս բերել հարցի լուծումը բանակցային իմունէն», ըսած է Փաշինեան:

Շար.ը՝ Էջ 10



ՄԱՅԱԿԱՆԵԱՆ - ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ Ե ԽԱՂԱՂ ՀՈՒՆՎՈՅԹԻ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Ուաշինկթընի մէջ տեղի ունենալիք Հայաստանի եւ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման ընդառաջ, 18 յունիսին Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոխրապ Մնացականեան հանդիպում ունեցած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներ Իկոր Փոփովի (Ռուսիա), Սթեֆան Վիսքոնթիի (Ֆրանսա), Էստրո Շոֆըրի (Միացեալ Նահանգներ), ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Զասփրիչիի հետ:

Շար.ը՝ Էջ 10

ՄԱՆՈՅԵԱՆ ԿԱՐԵՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ ՍԻՆԱՆԵԱՆԻ ԱՊԱԳԱՅԻ ԴԻՐԵՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 մայիս 2019-ին որդեգրուեցաւ «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունեութեան մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններու նախագիծը, որով սփիւռքի նախարարութիւնը կը լուծարուի, փոխարենը վարչապետի աշխատակազմին մէջ կազմաւորուելով սփիւռքի հարցերով յանձնակատարի գրասենեակ: 14 յունիսին Նիկոլ Փաշինեանի կողմէ յանձնակատարի պաշտօնին վրայ նշանակուեցաւ Միացեալ Նահանգներու Կլետտէյի քաղաքային խորհուրդի նախկին անդամ եւ քաղաքապետ, քաղաքագետ, իրաւաբան Չարէն Սիւսանեան:

Շար.ը՝ Էջ 10



ՀՅԴ ՀԵՄ «ԱՀԱՉԱՆԳ» ՆԱԽԱՉԵՆՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՆՍՏԱՅՈՅՑ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԷՔԻՆ ԱՈՋԷԻ



Ազգային ժողովի շէնքին առջեւ 19 յունիսին տեղի ունեցած է ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան «Ահազանգ» նախաձեռնութեան Նստացոյցը:

Շար.ը՝ Էջ 10

ՊԸՐԻԻ ԴՐՈՒՄՏԵՑ ԵԼԵՄՈՒՏԵԻ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՎԱՐԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԱՇԽԱՏԱՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրիի երեկ Այն Քիսի մեջ նախագահեց չորեքշաբթի օրուան երեսփոխանական հանդիպումին, որուն ընթացքին դրուատեց ելեմուտքի եւ պետական ամավարկի խորհրդարանական մնայուն յանձնախումբին աշխատանքը:

Ան վերահաստատեց 2019-ի պետական ամավարկը քննարկելու խորհրդարանին իրաւունքը՝ աւելցնելով, որ 2 առ հարիւր տուրքի դրութիւնը վերատեսուքեան պիտի ենթարկուի:

Այս շրջագիծին մէջ Պըրիի յայտնեց, որ ինք կը միտի խորհրդարանը հրաւիրել կառավարութեան հարցապնդման նիստի մը:

Արաբական աշխարհի մակարդակով, Պըրիի ընդգծեց, որ «Դարու գործարք»-ը կարելի չէ ընդունիլ՝ առանց անոր դէմ բողոքի ձայն բարձրացնելու: Այս շրջագիծին մէջ ան ողջունեց պաղեստինեան միացեալ կեցուածքը:

Խորհրդարանի նախագահը հաստատեց, որ լիբանանեան ջուրերուն մէջ գտնուող տնտեսական գոտին ամենէն հարուստն է նաւթով եւ բնական կազով:

Այս մասին Պըրիի հաստատեց, որ Լիբանան կառչած կը մնայ իր իրաւունքին եւ ո՛չ իր ցամաքային սահմաններէն մէկ սանթիմէթը եւ ո՛չ ալ իր ջուրերէն կաթիլ մը զիջելու մասին կը մտածէ:

ԻՊՐԱՅԻՄ ՌԻՉԸՐՏԻ ԴԵՏ ԲՆՆԱՐԿԵՑ ԵՐԿԿՈՐՄԱՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ԴԵՆԱԿԱՐՆԵՐԸ



Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գործարար Ապպաս Իպրահիմ երեկ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Էլիզապեթ Ռիչըրտը, որուն հետ ըննարկեց Լիբանանի եւ շրջանային իրադարձութիւնները:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ ամերիկեան դեսպանատան եւ Ընդհանուր ապահովութեան սպասարկութեան միջեւ երկկողմանի գործակցութիւնը ամրապնդելու հեռանկարները:

www.afhil.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՈՐՈՑՆԵՐ
«ԳԱՅԻԱՆԵՒ» ՊԱՐԻ ԴՈՐՈՑ

ՀՈՒՍԱՌՈՐՈՒԹԱՄԲ՝
ՏԻԱՐ ԱՆԻՏԻՍ ԱԿՏԱՆԵԱՆԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹ

ՄՈՎԼԻ

ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՐ
Աւագէ ստուերանկարներով

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸՆԱՆՈՒՄ
LASER-ով
ցուցադրութիւն
կատարողութեամբ
ԱՆՆԱ ԱՄՆԱԻ

ՅՈՒՂԱՆԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ - 150

Պարուոյց եւ գեղարուեստական դեկավարներ՝
Կարէն եւ Ժագին Մակինեան

Հինգշաբթի 27 եւ ուրբաթ 28 յունիս 2019,
Երեկոյեան ժամը 8:00-ին, Էմիլ Լահուտ սրահ, Տրպայի:

Թուագրուած տոմսները ստանալու համար դիմել չամագայիին «Լ. Շանթ»
(Պուրճ Համուտ) եւ «Ժ. եւ Տ. Խաչատուրեան» (Անթիլիաս) կեդրոններ:
Հեռ. 01-249375 01-265899 04-715491

ՆԱԽԱԳԱՅ ԱՌՆ ԴՐՈՒՄՏԵՑ ՍԱԼՄԱՆ ՊԸՆ ԱՊՏԵԼ ԱԶԻԶ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆԱԽԱԶՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախանցեալ օր պաշտօնական այցելութեամբ մը Լիբանան հասած սեւուական Շուրայի խորհուրդի մէկ պատուիրակութիւնը երեկ այցելեց հանրապետութեան նախագահի գոր. Միշել Աունի:

Պատուիրակութեան նախագահեց սեւուական Շուրայի խորհուրդի անդամ Սալեհ պըն Մանիի հըլլեալով:

Պատուիրակութեան ընկերակցեցան Լիբանանի եւ Սեւուական Արաբիոյ խորհրդարանական բարեկամական յանձնախումբի նախագահ, նախկին վարչապետ Թամմաժ Սալամ եւ Լիբանանի մէջ Սեւուական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պուխարի:

Նախագահ Աուն ողջունեց Լիբանանի եւ Սեւուական Արաբիոյ միջեւ եղբայրական յարաբերութիւնները՝ դրուատելով Սեւուական Արաբիոյ Սալման պըն Ապտէլ Ազիզ թագաւորին կողմէ Լիբանանի նկատմամբ իրագործած բոլոր նախաձեռնութիւնները, յատկապէս սեւուցի քաղաքացիներուն Լիբանան այցելութիւնը արգիլող որոշումին վերացումը, որուն շնորհիւ Լիբանան պիտի ունենայ զբօսաշրջական լաւ եղանակ մը՝ շնորհիւ սեւուցի եւ Շոցի երկիրներու քաղաքացիներուն:

Նախագահ Աուն ընդգծեց արաբական երկիրներուն միջեւ խաղաղութեան ու համախոհութեան վերահաստատման կարեւորութիւնը եւ շեշտեց, որ քաղաքական տարակարծութիւնները արաբական երկիրներուն միջեւ գտնուող ուխտին



սկզբունքները պէտք չէ շրջանցեն:

Իր կարգին, հըլլեալով ընդգծեց լիբանանցի ու սեւուցի ժողովուրդներուն միջեւ պատմական յարաբերութիւնները եւ զանոնք պաշտպանելու կարեւորութիւնը: Ան շեշտեց, որ Սեւուական Արաբիա պիտի շարունակէ զօրակցիլ Լիբանանին եւ անոր կայունութեան՝ աւելցնելով, որ սեւուցի քաղաքացիները ուրախ են Լիբանան իրենց վերադարձով, յատկապէս՝ ամրան եղանակին, որովհետեւ անոնք Լիբանանը իրենց երկրորդ հայրենիքը կը նկատեն:

ԱՅՆ ԹԻՆԷՍ ՄԵՋ

Սեւուական պատուիրակութիւնը, ընկերակցութեամբ նախկին վարչապետ Թամմաժ Սալամի, այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրիի:

Ներկայ գտնուեցան նաեւ երեսփոխաններ Նամմ Թոմմէ, Հատի Ապուլ Հասան եւ Թարեք Մերեպի, ինչպէս նաեւ դեսպան Պուխարի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ երկու երկիրներու խորհրդարաններուն միջեւ գործակցութեան հեռանկարները:

ԵԼԵՄՈՒՏԵԻ ԽՈՐՀՐԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ԳՐԵԹԷ ԱՄՐՏԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՎԱՐԿԻ ԲՆՆԱՐԿՈՒՄԸ

Ելեմուտքի եւ պետական ամավարկի խորհրդարանական մնայուն յանձնախումբը, նախագահութեամբ երեսփոխան Իպրահիմ Զանասիի, երեկ շարունակեց 2019-ի պետական ամավարկի քննարկումը:

Նիստին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ մեծ թիւով երեսփոխաններ, ինչպէս նաեւ վարչապետ Սաադ Պարիի, ելեմուտքի նախարար Ալի Հասան Խալիլ, արդարութեան նախարար Ալպեր Սարիան եւ հանրագոտ շինութեանց ու փոխադրութեան հարցերու նախարար Շուսեֆ Ֆընիա-նու:



թիւնը պէտք է առկայ ըլլայ՝ աւելցնելով, որ խորհրդարանին ու կառավարութեան միջեւ հասարակ յայտարարները բազմաթիւ են:

Ան նշեց, որ իրենց ժխտական չեն, այլ՝ դրական, եւ կը փափանքուի, որ բոլորը դրական ոճով գործեն, որովհետեւ ի վերջոյ չկայ քաղաքական յաղթական Լիբանան:

Նիստին ետք Զանասան յայտնեց, որ յանձնախումբին աշխատանքները գրեթէ աւարտած են: «Դեռական ամավարկի օրինական բաժինին քննարկումը արդէն իսկ աւարտած ենք, եւ յանձնախումբը պիտի գումարէ նիստ մը՝ քննարկելու համար առկա մնացած կարգ մը հարցեր, որոնց շարքին՝ 2 առ հարիւր տուրքի հարցը», ըսաւ ան:

Զանասան յայտնեց, որ լիբանանեան պետութիւնն ու լիբանանցիները կը լստահին կառուցողական բարեկարգումին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Պուրճ Համուտի քաղաքացիներուն շրջանի բնակիչներուն ուշադրութեան կը յանձնէ, թէ ընդհանուր ապահովութեան, մաքրութեան եւ կենսոլորտի պահպանումին համար որոշած է հետեւեալը:

Ա.- Քաղաքացիներէն եւ շրջանի բնակիչներէն կը պահանջուի տոյն գրութեան թուակաւէն մինչեւ երկու ամիս իրենց շէնքերու տանիքներէն վերցնել հեռատեսիլի «անթեն»-ները, աղբերը եւ բոլոր ինչ ու լըուած իրերը:

Բ.- Բնակիչներու այս աշխատանքը դիւրացնելու համար վերոյիշեալ երկու ամիսներուն ընթացքին, կիրակի օրերը առաւօտեան ժամը 8:00-էն մինչեւ կեսօրուան ժամը 12:00, քաղաքացիտարանի բեռնակառքեր պիտի շրջին թաղերուն մէջ: Բնակիչներուն կը մնայ տանիքներէն իջեցնել այդ «անթեն»-ներն ու իրերը, եւ քաղաքացիտարանի բեռնակառքերը կը ստանձնեն զանոնք փոխադրելու ու թափելու աշխատանքը:

Գ.- Երկու ամսուան ժամանակամիջոցի աւարտին, քաղաքացիտարանի աշխատակազմը պիտի ստուգէ տանիքներուն վիճակը, եւ չմաքրուած տանիքներուն պատասխանատուները պիտի ստիպուին մաքրել ու հոգալ փոխադրութեան եւ թափելու ծախսերը:

Յոյս ունիք, որ քաղաքացիներն ու բնակիչները կ'ընդառաջեն ու կը գործակցին այս նախաձեռնութեան հետ, ի խնդիր ընդհանուր ապահովութեան, մաքրութեան եւ կենսոլորտի պահպանումին:

ՄԱՐՏԻԿ ՊՕՐՈՒՄԵԱՆ
Քաղաքացիտարանի Պուրճ Համուտի

ԴԵՍՊԱՆ ԱԹԱԲԵԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԶԱՐԻՐԻԻ



Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբեկեան երեկ այցելեց վարչապետ Սաադ Պարիի:

Վարչապետարանին մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուեցան հայ-լիբանանեան միջկառավարական յանձնախումբի աշխատանքային գործունեութեան վերաբերող մանրամասնութիւնները:

Նշեց, որ հայ-լիբանանեան միջկառավարական յանձնախումբին կը նախագահեն Հայաստանի եւ Լիբանանի վարչապետները:

«ԿԸ ՄԱՂԹԵՄ, ՈՐ ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒՆ ԹԻՒՆ ՄԱՍԻՆ ԱԿՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՍ ԾԻՇԴ ԸԼԼԱՆ» ՇԵՇՏԵՑ ՆԱԽԱՐԱՐ ԿԻՏԱՆԵԱՆ



Զբօսաշրջութեան նախարար Անտիս Կիտանեան երեկ մեկնարկէ կատարեց Էհմեժի Թ. փառատօսին՝ ներկայութեամբ Ժիպէլի երեսփոխաններ Զիատ Հաուաթի, Մուսթաֆա Հիսեյնիի եւ Սիմոն Ապի Ռամիայի, Էհմեժի քաղաքացիտարանի Նազիհ Ապի Սըմանի եւ Ժիպէլի քաղաքացիտարանի խորհուրդներու համադաշնակցութեան նախագահ Ֆատի Մարթինսի, ինչպէս նաեւ շրջանի թաղապետներուն:

Կիտանեան նշեց, որ բազմիցս այցելած է Էհմեժ եւ զգացած ժողովուրդին հիւրասիրութիւնը: «Էհմեժի մէջ կազմակերպուած փառատօսները տարբեր են այլ շրջաններու փառատօսներէն: Հոն այցելողը հանգիստ եւ ուրախ դուրս կու գայ՝ զգալով, որ սովորական եւ ընթացիկ փառատօսի մը չէ, որ ներկայ գտնուած է», հաստատեց ան:

Նախարար Կիտանեան նշեց, որ փառատօսները ներքին լիբանանեան զբօսաշրջութեան ողնայարը կը նկատուին՝ մաղթելով, որ այս տարուան ընթացքին Լիբանան այցելող զբօսաշրջիկներուն թիւին մասին իր ակնկալութիւնները ճիշդ դուրս գան:

Միւս կողմէ, նախարար Կիտանեան, նախանցեալ օր ներկայ գտնուեցաւ կենսոլորտի նախարար Ֆատի ժայսաթիի հրաւիրած մամլոյ ասուլիսին, որուն ընթացքին յայտարարուեցան տարեկան դրութեամբ կատարուող լիբանանեան ծովափներուն առողջապահական չափանիշներուն վերաբերող քննութեան արդիւնքները:

Մամլոյ ասուլիսին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ երկրագործութեան նախարար Հասան Լաքքիս:

Ասուլիսին ընթացքին յայտարարուեցաւ, որ Լիբանանի ծովափներուն պարագային 14-ը մաքուր ծովափներ կը նկատուին, այսինքն՝ ծովափներ, ուր լողալը առողջապահական չափանիշներով կարելի է: Անոնց կողքին կան նաեւ 8 ծովափներ, որոնք ապականած են, իսկ չորս ծովափներ, որոնք խոցելի վիճակի մէջ կը գտնուին:

Մաքուր ծովափներէն կը նկատուին Սուրի, Նաբուրայի, Պաթրուսի, Ժիպէլի, Ֆիտարի, Թապարձայի, Օքայպէի, Անֆէի եւ Մաամլըթէյի ծովափները, իսկ ապականած ծովափներէն կը նկատուին Ռամլէթ Պայտայի, Պուրճ Համուտի, Տրպայի, Սըլաթայի, Հըրիի, Ռմայլէի, Սայտայի եւ Սարաֆանիի ծովափները:

Մամլոյ ասուլիսին ընթացքին հաստատուեցաւ նաեւ լիբանանեան ջուրերուն մէջ ապրող ձկնային հարստութեան առողջութիւնը:

Այս առիթով Ա. Կիտանեան կոչ ուղղեց բոլորին կատարեալ առարկայական մօտեցումով ստանձնելու իրենց պատասխանատուութիւնները՝ աւելցնելով, որ Լիբանանի դրացի երկիրները, որոնք հարուստ զբօսաշրջութեամբ օժտուած են, նոյն հարցերը կը դիմագրաւեն:

«Լիբանան ապահով վիճակի մէջ կը գտնուի, եւ ամառը զբօսաշրջական առումով խոստմնալից է», ըսաւ նախարար Կիտանեան՝ հաստատելով, որ ինք կը զօրակցի նախարար ժայսաթիին՝ պատասխանատուութիւն ստանձնելու առումով, եւ շեշտեց, որ լիբանանեան պետութիւնը իր կարգին պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը:

Նախարար Կիտանեան լրատումիջոցներէն խնդրեց ճշմարտութիւնը սփռել:

«ԱԶԴԱԿ»Ի ԱՐԱԲԵՐԻՆ
ԿԱՅԲԷԶԸ
www.aztagarabic.com

ԲԱՅՈՒՄ՝ «ԱԶԴԱԿ»-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԵՆ ԶՐԻՍՏ ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԻՆ

Կազմակերպությունը «Ազգակ»-ին, երեկ՝ չորեքշաբթի, 19 յունիս 2019-ին, «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ բացումը կատարուեցաւ «Ազգակ»-ի երիտասարդ աշխատակիցներէն Զրիստ Իսկենտերեանի գեղանկարչական առաջին անհատական ցուցահանդէսին, որ նուիրուած է Կոմիտասի ծննդեան 150-ամեակին:

Բացման ու բարի գալուստի խօսքը արտասանեց «Ազգակ»-ի խմբագիրներէն Արշո Պալեան, որ ըսաւ, թէ ասիկա առիթ է ծանօթանալու երիտասարդ գեղանկարչի մը՝ Զրիստ Իսկենտերեանի արուեստին, որ տպաւորիչ է ո՛չ միայն իր ոճով եւ գոյներով, այլ նաեւ իր թեմայով: Ան դիտել տուաւ, որ ներկայացուած 60 գործերը գծուած են 5 տարիներու ընթացքին՝ 2014-2019, անցնելով, որ երիտասարդ գեղանկարիչը ազդուած է Հայոց ցեղասպանութենէն, հայրութեան տարագրութենէն, բայց եւ այնպէս կառչած է նաեւ յոյսին եւ ապագայի վառ գոյներուն:

Անդրադառնալով Զրիստ Իսկենտերեանի եւ «Ազգակ»-ին միջեւ յատուկ կապին՝ Արշո Պալեան մատնանշեց, որ ան 2017-ին միացաւ «Ազգակ»-ի խմբագրութեան նախաձեռնած լրագրութեան վարժողական աշխատանքին եւ դարձաւ մասնակիցներէն «Ապագայ լրագրող»-ներու Ա. փուլի ծրագիրին, զոր աւարտելէ ետք, այսօր, արդէն օրաթերթի անձնակազմին մաս կը կազմէ՝ բոլորը տպաւորելով իր ճշդապահութեամբ, հետեւողական աշխատանքով, բժախնդրութեամբ ու ինքնավստահութեամբ: Ասկէ մեկնած, «Ազգակ» ուզած է քաջալերել երիտասարդ աշխատակիցը եւ նախաձեռնած այս ցուցահանդէսին:

Ապա խօսք առաւ եւ երիտասարդ գեղանկարչի գործերուն մասին խօսեցաւ «Ազգակ»-ի «Արուեստի էջ»-ի պատասխանատու, արուեստաբան ղոկտ. Մովսէս Յերկելեան, որ դիտել տուաւ, թէ Հայաստանէն Լիբանան վերադառնալով, 1981-ին, ստանձնեց երկու առաքելութիւն՝ աշխատանք, որպէսզի գաղութը առաւել եւս սիրէ, գնահատէ եւ ընկալէ կերպարուեստն ու մշակոյթը, իսկ երկրորդ՝ քաջալերել սկսնակները, յատկապէս երիտասարդները: Ան անելցուց, որ սկիզբը ան քաջալերած ու զովաբանած է բոլոր երիտասարդները, սակայն տարիներ ետք անդրադարձած է, թէ եթէ ցորենը առողջ է, այն ատեն պէտք է ցանուի առողջ միջավայրի մէջ, զուրգուրանք ու խնամք ստանայ, որպէսզի աճի ու արտադրէ: Մ. Յերկելեան առողջ ցորենի հատիկ նկատեց Զրիստ Իսկենտերեանը, որուն Աստուած տաղանդ, շնորհի ու կրակ տուած է, որպէսզի ստեղծագործէ եւ արդէն իսկ իր կրակին տուած արգասիքին հունձքով ներկայանայ հանրութեան: Ան դիտել տուաւ, որ արուեստը անվերջ ուսումնասիրութեան կը կարօտի, որպէսզի գեղանկարիչը զարգանայ: «Այս երի-



տասարդը տաղանդը ունի, նաեւ՝ ստեղծագործելու տենչը, իրեն կը մայր անընդհատ զարգանել այդ բոլորը, չիրաժարիլ տքնաջան աշխատանքէ, որպէսզի հաւասարի մեծերուն՝ միշտ նպատակ ունենալով համաշխարհային արուեստագէտ ըլլալ», հաստատեց Մ. Յերկելեան՝ նշելով, որ Զրիստ Իսկենտերեան ներշնչուած է Փոլ Կիրակոսեանի արուեստէն, ինչ որ ինքնին շնորհի մըն է: Ան շեշտեց, որ իւրաքանչիւր արուեստագէտ իր գործերուն մէջ անընդհատ պէտք է ինքզինքն փնտռէ, որպէսզի տարբերի բոլորէն, կերտէ իր անհատականութիւնը եւ ընդունելի ըլլայ բոլորին կողմէ՝ իր նախորդներուն վրայ բան մը անելնելով թէ՛ իբրեւ գործ, եւ թէ՛ իբրեւ որակ:

Ղոկտ. Յերկելեան ըսաւ, թէ յատկանշական է Զրիստ Իսկենտերեանի Կոմիտաս գործը, որ իր արտայայտչականութեամբ, բովանդակութեամբ, իմաստով, համադրութեամբ կը զատորոշուի միւսներէն՝ այսպիսով երիտասարդ արուեստագէտը եւս կը յաջողի իր առաքելութեան մէջ:

Աւարտին իր սրտի խօսքը ուղղեց Զրիստ Իսկենտերեան, որ ըսաւ, թէ իր գործերուն մէջ երեւցող մարդոց մէջ ներկայութիւն է 150-ամեայ անմահ Կոմիտաս վարդապետը, ներկայութիւն են Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակները, տարագրութեան ճամբուն վրայ կեանքէն հեռացողներն ու վերապրողները, նաեւ՝ հայրենի աշխարհի կռուները, մարդոց կեանքն ու աօրեան: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց «Ազգակ»-ի մեծ ընտանիքին, որուն ջանքերով ու քաջալերանքով ընթացք առաւ իր սկսքը: Երիտասարդ գեղանկարիչը նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք հաւատացին իր արուեստին, նեցուկ կանգնեցան ու կը քաջալերեն զինք:

Ապա ներկաները դիտեցին «Փիւնիկ» սրահը հարստացուցած Զրիստ Իսկենտերեանի պատանշները, որոնցմէ իւրաքանչիւրը օժտուած է տարբեր իրապատկութեամբ, գոյներու համադրումով, ներկայացման ուրոյն ձեւով: Հոն է հայրութեան կեանքն ու մահը

Շար.ը՝ էջ 10

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԱԽԱԳԱՅԵՑ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՈՒՍՈՒՑՉԱՑ ԶԱՆԴԻՊՈՒՄԻՆ

Երեկ՝ չորեքշաբթի, 19 յունիս 2019-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքին մէջ տեղի ունեցաւ դպրեվանքի ուսուցչաց հանդիպումը կրթական տարեփակին առիթով: Բնականաբար, հանդիպման նպատակն էր ընդհանուր արժեւորումի ենթարկել դպրեվանքի 2018-2019 կրթական տարեշրջանի ուսումնական աշխատանքը, աշակերտներու՝ դասարան առ դասարան եւ աշակերտ առ աշակերտ կատարած աշխատանքը եւ ապա ճշդել յառաջիկայ կրթական շրջանի ծրագիրին ու կատարուելիք աշխատանքին ընդհանուր ուրուագիծը:

Վեհափառ հայրապետը, ողջունելով դպրեվանքի ուսուցչական կազմը, իր բարձր գնահատանքը յայտնեց անոց հայ ուսուցչի յատուկ նուիրումով ու բժախնդրութեամբ կատարած իրենց կրթադաստիարակչական աշխատանքին համար: Ապա խօսելով դպրեվանքին մասին վեհափառ հայրապետը յիշեցուց, թէ դպրեվանքը տվորական դպրոց մը չէ իր կրթական ծրագիրով, իր միջավայրով եւ իր նպատակով: Ան վաղուան հոգեւորականին, ուսուցչին, մտաւորականին հոգեմտաւոր կազմաւորման լծուած առաքելութիւն է: Այս մօտեցումով պէտք է ուսուցիչը կատարէ իր դերը դպրեվանքին մէջ:

Վեհափառ հայրապետը նաեւ անդրադարձաւ դպրեվանքի ներքին կրթական կեանքին եւ արտադասարանային աշխատանքներուն առնչուած կարգ մը երեւոյթ-



ներու՝ կատարելով անհրաժեշտ թելադրութիւնները: Ան յատկապէս շեշտեց աշակերտին լեզուամտածողութիւնը, քննական ու վերլուծական մօտեցումը խորացնելու եւ զարգացնելու կարեւորութիւնը: Միաժամանակ յիշեցուց դպրեվանքի կրթական ծրագիրը վերատեսութեան ենթարկելու հրամայականը՝ նոր ժամանակներու եւ մարտահրաւերներու յոյսին տակ:

Յայտնեց, որ վեհափառ հայրապետը իր արեղայութեան տարիներէն սկսեալ մինչեւ այսօր դպրեվանքին մէջ եղած է ուսուցիչ: Ան այսօր եւս կը դասաւանդէ աստուածաբանութիւն դպրեվանքի աւարտական դասարանին:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ԳԱՐԱԿԵՕԶԵՍՆ» ԶԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԵՆԸ ԵՒ ԶԱՆԱՑՑԵԱԼՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԵՆ

Երեքշաբթի, 18 յունիս 2019-ին, Պիքֆայայի Սուրբ Աստուածածին վանքի վեհաբանին մէջ, իր աշխատանքային հանդիպումներու ծիրին մէջ, վեհափառ հայրապետը ընդունեց «Գարակեօզեան» բարեփրական հաստատութեան տնօրէն Սերոբ Օհանեանը: Ան տեղեակ պահեց վեհափառ հայրապետը հաստատութեան բարեփրական, ընկերային ու առողջապահական գործունեութեան, ինչպէս նաեւ յառաջիկայ ծրագիրներուն մասին: Վեհափառ հայրապետը իր գնահատանքը յայտնեց՝ մօտէ իմանալով հաստատութեան հետզհետէ ծաւալող աշխատանքը հայահոծ շրջաններուն մէջ:

Այս առիթով վեհափառ հայրապետը նաեւ իր հայրական գնահատանքը յայտնեց Լիբանանահայ օգնութեան խաչին, Բարեգործականին, «Ծինիշեան»-ին, «Չուարթոն»-ին, ինչպէս նաեւ հայկական բարեփրական այլ միութիւններու աշխատանքներուն, որոնք իրենց կարելին կը կատարեն հասնելու ժողովուրդի կարիքաւոր զաւակներուն:

Միւս կողմէ, վեհափառ հայրապետին այցելեցին Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեանի եւ Ֆրանսայէն վեր. Ժիլպեր Լեոնեանի զխաւորութեամբ Ֆրանսայէն Հայ անտարանական համայնքին պատկանող հաւատացեալներ:



Վեհափառ հայրապետը ընդառաջելով անոց հետաքրքրութիւններուն ու հարցումներուն՝ անհրաժեշտ բացատրութիւններ տուաւ հայ եկեղեցւոյ ու անոր աստուածաբանութեան եւ միջեկեղեցական շարժումին մասին: Հիւրերը նաեւ շրջեցան Ս. Աստուածածին վանքի զանազան բաժանմունքները եւ ապա ուղղուեցան Անթիլիասի մայրավանք:

Նաեւ, Նոյն օրը, առաւօտուն, վեհափառ հայրապետը դպրեվանքի տեսուչ Պօղոս վրդ. Թինքեանի եւ Ս. Աստուածածին վանքի վերահսկիչ Շնորհք վրդ. Աշրգեանի ընկերակցութեամբ այցելեց Պիքֆայայի վանքին մէջ շինարարութեան ընթացքի մէջ գտնուող եպիսկոպոսներու եւ հիւրերու յատուկ շէնքը, ինչպէս նաեւ դպրեվանքի դաշտն ու մուտքը եւ ուրախութեամբ հաստատեց, որ շինութիւնները լայն չափով յառաջացած են, եւ շուտով անոց բացումը պիտի կատարուի:

115

zartalks

SHARING IDEAS

Zavarian Student Association
Presents

SPACE

Exploring Different Perspectives

Saturday, June 22
12:00 pm - 5:00 pm

Community Square
Antwork, Spears

10-20 վայրկեան տեւողութեամբ 6 դասախօսութիւններու շարք մը, որուն ընթացքին իւրաքանչիւր մասնագէտ տարբեր դիտանկիւնով պիտի ներկայացնէ «space»-ի գաղափարը:

Նիւթերն ու դասախօսներն են.-
Public space: Ճեմքա Շնմալի
Astronomy: Անդրանիկ Սեֆիլեան
Environmental space: Վահագն Թապաբեան
Space and Identity: Սրազ Գոնայեան
Personal space 1: Սոհամետ Սանսուր
Personal space 2: Տոքթ. Արա Գալաբեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊԻՍԿՈՓՈՍ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲՈՒՄԷԸ

ԿԱԼԼ-ԸՆԹՐԻՔ

Հովանաւորութեամբ՝
ԳԵՐԸ. Տ. ՆԱՐԵԿ ԿՐԷԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 21 Յունիս 2019-ին,
Երեկոյեան ժամը 9:00-ին սկսեալ,
"Le Royal" պանդոկի
"Azurea Ballroom" սրահին մէջ:

ՍՈՒՐԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 101-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ



2 յունիսին Գամիշլիի մէջ ՀԱՄԸ-ի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի Ա. անկախութեան նուիրուած տօնակատարութիւնը: Օրուան հանդիսավար տղոջ՝ Մարի Մելքոնեան-Պետրոսեանը հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու ազատութեան ճանապարհին զոհուած անմահ հերոսներուն յիշատակը, որմէ ետք բացման խօսքով հանդէս եկաւ Գրիգոր Թովմասեանը: Ան լուսարծակի տակ առաւ հայու մարտական ոգին ու յարթական ուժը, հաստատելով, որ հակառակ այն իրողութեան, որ Հայաստանի պատմութեան էջերը լի են պատերազմներով, կորուստներով, դժուարութիւններով, որոնց վրայ դրոշմուած են Յեղասպանութիւնը, երկրաշարժի ու տառապալից օրերը, սակայն այդ նոյն պատմութեան էջերը մեզի կը ներկայացնեն հայ ժողովուրդը, որ դարեր շա-

րունակ աշխատանք տարաւ, գոյատեւման պայքար մղեց յանուն իր երկրի արժէքներու պահպանման: Ան ըսաւ, որ հայուն ճանապարհը դժուար եղած է, եւ թշնամին ջանք չէ խնայած՝ ոչնչացնելու մեր երկիրը, սակայն այսօր մենք կանք ու կը շարունակենք հաստատել մեր ինքնութիւնը: Ան շեշտեց, որ մայիսեան հերոսամարտերով ծնունդ առաւ Հայաստանի Ա. անկախութիւնը, որ մեզ վերածեց միջազգայնօրէն ճանչցուած, պետականութեան տեր ժողովուրդի: Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը բերին Նուշիկ Տիգրանեան՝ ասմունք եւ երգիչ Ճորճ Գալայճեան: Ցուցադրուեցաւ Նաեւ տեսերիզ մը, որ կը ներկայացնէր հայութեան ծագումը եւ դիմագրաւած մարտահրաւերները՝ մինչեւ մայիսեան յաղթանակ:

ՄԻԱՅՆԱԼ ՆԱԴԱՆՈՒՄ

ՅՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ 150-ԱՄԵԱԿԻՆ

Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի եւ կազմակերպութեամբ Փաստօրէնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու հոգաբարձութեան, 31 մայիսին եկեղեցւոյ մէջ հոգեւոր համերգով մը նշուեցաւ Կոմիտաս վարդապետի ծննդեան 150-ամեակը: Ելոյթ ունեցաւ եկեղեցւոյ դպրոց դասի երգչախումբը՝ խմբավարութեամբ դպրապետ Երուանդ սրկ. Բէշիշեանի:

Ս. Սարգիս եկեղեցւոյ հովիւ Պօղոս քնյ. Պալթայեանը բարի գալուստ մաղթեց բոլորին, ապա ամփոփ կէտերու մէջ ներկայացուց Կոմիտաս վարդապետին կենսագրականը եւ անոր երաժշտական անմահական ժառանգութիւնը:

Ապա երգչախումբը ներկայացուց Կոմիտաս վարդապետի ամենէն հանրայայտ հոգեւոր եւ ժողովրդային երաժշտական մշակումներէն երգերու ընտրանի մը՝ մերթ ընդ մերթ Պարոյր Սեւակի «Անլեռնի գանգալատուն»-էն հատուածներու ընթերցումով:

Աւարտին, առաջնորդ սրբազանը ուղղեց իր պատգամը՝ համերգը համարելով ոգեղնական երեկոյ մը: Ան վկայութիւններ բերաւ աշխարհահռչակ երգահաններէ՝ Կոմի-



տասի երաժշտութեան եւ մշակած պատարագին մասին, շեշտելով, որ Կոմիտաս վարդապետ եղաւ ու կը մնայ հայ երգի եւ երաժշտութեան լուսաւորիչը: Սրբազանը գնահատեց հոգեւոր հովիւին ու հոգաբարձութիւնը եւ դրուատեց յատկապէս դպրապետին ու դպրոց դասի բոլոր անդամները:

Երեկոյն վերջ գտաւ «Պահպանիչ»-ով եւ «Կիլիկիա» մաղթերգով:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ՝ Ի ՊԱՏԻ ԷԼԼԱՏԱ ՉԱԽՈՅԵԱՆԻ 45-ԱՄԵԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՆ

Կազմակերպութեամբ «Վահան Միրաքեան» եւ «Արփա» ընկերակցութիւններուն, 28 մայիսին Կլենտոնի «Ալեկրո» ճաշարանին մէջ տեղի ունեցաւ ձեռնարկ մը՝ Հայաստանի վաստակաւոր արուեստագիտուհի, միջազգային հանրային տոփրանօ եւ բազմաթիւ մրցանակներու դափնեկիր Էլլատա Չախոյեանի 45-ամեայ գործունեութեան ի պատիւ դրոշմաթուղթի հրապարակման առթիւ:

Դետոյթ քնյ. Զիրաքեանը թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի կողմէ Էլլատա Չախոյեանին յանձնեց գնահատագիր մը, որուն մէջ առաջնորդը կը շնորհաւորէր մեծաբեւոյց, որ արժանաւորապէս կը գնահատուէր ամբողջ կենսք մը երաժշտական աշխարհէն ներս իր ունեցած ներդրումին համար: Առաջնորդը կը մաղթէր առողջութիւն եւ արեւշատ տարիներ, որպէսզի երգչուհին իր աստուածատուր տաղանդով շարունակէ դիպել արուեստաւերներու սրտերն ու հոգիները:

Ցայտնեց, որ 24 մայիսին Է. Չախոյեանը այցելեց Ազ-



գային առաջնորդարան եւ սրբազան հօր հետ հանդիպման ընթացքին անոր յանձնեց դրոշմաթուղթէն օրինակ մը:

ԴՈԿՏ. ԶԱԷՆ ՄԱՐԿԵԱՆԻ ԱՅՅԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՈԼԵԾԻ ՇՐՋԱՆԱՄԱՐՏՆԵՐՈՒՆ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Պելրոյթի Հայ անտարանական քոլեճի պատաւով տնօրէն դոկտ. Զաւէն Մաքրլեանը, ընդառաջելով Միացեալ Նահանգների Արեւմտեան ափի շրջանաւարտներու եւ Նախկին աշակերտներու հրաւերին, 22 մայիսին մեկնեցաւ Լոս Անճելէս եւ ներկայ գտնուեցաւ անոնց կազմակերպած հաւաքին, որ տեղի ունեցաւ 25 մայիսին, Կլենտոնի «Փենիսիա» հայկական ճաշարանին մէջ: Կազմակերպիչ միութեան անունով ձեռնարկին ելոյթ ունեցաւ Փիրայր Փրոմեանը, որմէ ետք խօսք առաւ Տարօն Տէր Խաչատուրեանը, որ անդրադարձաւ Հայ անտարանական քոլեճին եւ դոկտ. Զաւէն Մաքրլեանին եւ հրաւիրեց գայն արտասանելու իր սրտի խօսքը: Դոկտ. 2. Մաքրլեան լուսարձակի տակ առաւ դպրոցին անցեալն ու ներկան՝ շեշտելով, որ շրջանաւարտներն ու Նախկին աշակերտները իրենց ներդրումով նպաստած են ու կը նպաստեն դպրոցի գոյատեւումին ու առաքելութեան շարունակութեան: Ան հաստատեց, որ դպրոցը հպարտ է իր շրջանաւարտներով եւ Նախկին աշակերտներ-



րով, որոնք կենացի այլազան բնագաւառներու մէջ յաջողութիւն արձանագրած են եւ անոնք Հայ անտարանական քոլեճի գանձերն են:

Ձեռնարկին ընթացքին եղան նուիրատուութիւններ: Ցայտնեց, որ դոկտ. 2. Մաքրլեանը Պելրոյթ վերադարձաւ 5 յունիսին:

ԲԱՆԱՏԱ

ԲԱՆԱՏԱՅԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՆԱՀԻՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Յունիս 14-ին Զանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեանը Օթթաուայի մէջ ընդունեց Զանատայի հայ համայնքի կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները:

Դեսպանատան մէջ կայացած ընդունելութեան ընթացքին, հիւպատոս Արա Մկրտչեանի բարի գալուստի խօսքէն ետք, դեսպանը շնորհակալութիւն յայտնեց Զանատայի հայութեան եւ իր ուղերձին մէջ ըսաւ. «Դուք միշտ եղել էք դեսպանութեան կողքին, դեսպանատան կազմաւորման առաջին իսկ օրից: Ես իմ կողմից վստահեցնում եմ, որ այդ համագործակցութիւնը պիտի շարունակուի: Կրկնակի մեծ պարտաւորութիւններ ունեմ որպէս առաջին կին դեսպան Զանատայում եւ յուսով եմ, որ պատուով կը կատարեմ իմ առջեւ



դրուած առաքելութիւնը: Ես ձեռք իւրաքանչիւրիդ համարում եմ դեսպանութեան մի փոքրիկ օղակը»:

Շար.ը՝ էջ 8

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵԼՈՅԹԸ



Կազմակերպութեամբ ՀՅԴ Ֆիքսի «Արամ Մանուկեան» կոմիտէի քարոզչական յանձնախումբին եւ ՀՅԴ Երիտասարդական միութեան Ֆիքսի «Դրօ» խումբին, 2 յունիսին Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբի «Աւետիգեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան 101-ամեակին եւ Արամ Մանուկեանի մահուան 100-ամեակին նուիրուած ձեռնարկ:

Ձեռնարկի Նախագահ Նանոր Էրջենեան իր բացման խօսքին մէջ վեր առաւ մայիս 28-ի անկախութեան խորհուրդը, յատկապէս՝ Արամ Մանուկեանի ներդրումը հայոց պետականութեան հաստատման մէջ, շեշտելով, որ այսօր ես հայ երիտասարդութիւնը կը ներշնչուի Արամ Մանուկեանի ասանդով:

Օրուան պատգամը յղեց Զեքի Եփրեմեանը, որ շեշտեց, թէ երկու թուականներն ալ այսօր հայ ժողովուրդի ակնածանքն ու

հպարտութեան աղբիւրը կը հանդիսանան: Եփրեմեանը իր խօսքին մէջ ներկայացուց Արամ Մանուկեանի յեղափոխական կենսանքին երեք կարեւոր փուլերը, որոնք առաջնորդեցին ազատ եւ անկախ Հայաստանի նշանակալից եւ պատմականօրէն անգերազանցելի իրականութեան: Ան հաստատեց, որ Արամ գիտցաւ իր վրայ առած իշխանութիւնը վերածել հաւաքական կամքի, իր մէջ ամբարուած կիրքը փոխանցել ամեն մէկ հայու, մասնաւոր՝ իր վարչական ու պետական ամբողջ հմտութիւնը տարածել իր շուրջիններուն վրայ: Վերջապէս, պատմական այդ տարիներուն, ան գիտցաւ հայ ժողովուրդի միասնութեան եւ կենսունակութեան շարախը դառնալ, անցնելով, որ այս կը սպասուի նորօրեայ դէպակարներէն անխտիր:

Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

ՖՐԱՆՍԱ

107,790 ԵՒՐՕ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՅԱՒ ՎԱԼԱՆՍԻ ՖՐԱՆՔԵԻՀԱՅՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՄԱՐ

18 մայիսին Վալանսի ցուցահանդէսներու կեդրոնի «Վերքոր» սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ներկայութեամբ ւաւելի քան 550 անձերու:

Երեկոյթին ընթացքին Վալանսի Ֆրանքեի-հայկական դպրոցի շինարարութեան համար հանգանակուեցաւ 107.790 եւրօ: Այս գումարը կը ցրուցէ ոգետրութիւնը ծրագրին նկատմամբ, որ ծնունդ առած է 2015-ին, քաղաքի խումբ մը իրիտասարդներուն կողմէ: Ծրագիրը կը վայելէ



Շար.ը՝ էջ 5

ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ

«ՅՈՐԻՉՈՆ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**ՀՅԴ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՀԱՅՐԵՆԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԸ
ՆՊԱՏԱԿԱՌԻՂ ԴՈՒՍԾ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ**

«Արի ու առևակա՛ն կեցուածքով երիտասարդութիւն մը կը բախտ արդէն հայ կեանքի դռները: Ան պէտք է արագօրէն հասունանայ եւ ինքզինք ամբօրէն շղթայէ իր ժողովուրդի անցեալին՝ կերտելու համար անոր փայլուն ապագան: Բարձր անկախակա՛ն մը համար պայքարի դաշտ կը կանչէ ձեզ 33 Դաշ- իակցութիւնը»:

Տոքթ. Բաբգեն Փափագեան



ՀՀ ԴՅԱՆՈՒԹՅԱՆ ԿՈԴԵՔՍԻՆԵՆՑԻԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՀ ԵՐԻՏՈՒՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԸ: Հայ երիտասարդությունը քաղաքականացելու եւ Հայ դատի լուծման գործընթացին մէջ նորաստան սերունդը ներգրավելու յստակ մտադրութեամբ, 1929 թուականին գումարուած ՀՀԴ ժԱ. Ընդիմադուր ժողովը պաշտօնապէս առաջարդեց երիտասարդական եւ պատմական միութեան ստեղծելու պահանջը, եւ այդ օրէն ի վեր կուսակցութեան ընկերային-քաղաքական աշխարհընկալման առանցքային գաղափարներու դրօշակիրը դարձաւ դաշնակցական երիտասարդութիւնը:

Վերջին տարիներուն Հայ յեղափոխա-
կան դաշնակցութեան Լիբանանի, իրաց-
եալ Լահակներէն, Աստորախոյ, Ֆրան-
սայի, Քանաւայի, Իրանի երիտասարդա-
կան եւ ուսանողական միութիւնները պա-
տենկան ճամբարները կը կազմակերպէին
Հայկաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ...
Շուշի, Ստեփանակերտ, Սիսիան, Կոնա-
նոր, Չարենցաւան, Մարտունի, Վոլա-
կան, Ասկերան, Բերձոր, Տարազիւղ,
Ալաթաւքալ, Մեղաթաղ, Տիգրանաւան,
Արցեւիսիտ...

Ճամբարներու ծրագիրները կ'ընդգծուին՝ հայ ժողովուրդի յեղափոխական դէմքերու, հայրուկներու եւ դպեալներու ծանօթացում, Հայ դատի այսօրուակ եւ ապագայի մարտադիւրաբերներու ներկայացում, հաշմանկութեան պատմութեան ուսուցում, գրուցարան-աւուլիքներ, Արցախի աւաւաւարական պայքարի ժամանակակարութեան պատմութիւն, անգլերէն լեզուի եւ համակարգիչի դասընթացքներ, դաստիարակչական խաղեր, հայրենասիրական եղանակ ուսուցում:

Նորահաս սերունդը ազգային գաղափարախօսութեամբ թրծելու առաքելութիւնը վեհ յանձնառութիւն է դաշնակցական երիտասարդին համար: Հայրենի հողին վրայ գործունեութիւն խարսխելու նա-

խաձեռնություններով դաշնակցական երիտասարդությունը առիթով կ'ունենալ համաձայնությունը պատմական հայրենիքին հետ ել իր ներսիժի լիարժեք օգտագործումով իր ներդրումը կը բերե ներուղներում ազգային դատարարականության կայացման գործին մէջ։ Այս ճամբարները նոր մտահորիզոններ ու աշխարհայացքներ կ'ընձեռեն նաեւ գործողութեան վարիչներուն, որոնք մասնակից դառնալով ճամբարային ծրագիրներուն՝ կ'ամրագրեն ոգեղեն կապը հայրենի հողին հետ։

ՀՀ-ի Զանառայի երկրորդ ամբարը իր 9-րդ տարին կը բոլորէ եւ իր գործունէութիւնը ընդլայնելով՝ արդէն իսկ ծրագրին մէջ ներառած է Սպիտակ քաղաքը: 9 տարուան ընթացքին ՀՀ-ի երկրորդ ամբարը իսկ ան-դամ հարիւր պատասխանատու-վարիչներ գործունէութեւն եւ Լոռիի մարզը, եւ նոյն այդ ժամանակահատուածին երկու հազար երեխաներ մասնակցի դարձած են ՀՀ-ի ԵՄ-ի ամառային ամբարի ծրագրին ընդ-րուլ:

Հագարաւոր հայ պատմասիներու դատախարակեան եւ մարմնակրթական գաղութացման ուղղուած այս ճամբարները պատճառ հանդիսացած են Լաւե, որ տասնեակ ղաշակցեան երիտասարդներ հայրենադարձութեան որոշումը կայացնեն: Ի վերջոյ, ՀՀԴ ծրագրային հանձնաժողովի մէջ ամրագրուած տարագիր հայութեան աշխարհագրական միաւորման՝ ամբողջական Հայաստանի տարածքին համախմբման սկզբնակէտը հայրենադարձութեան է:

Դաշնագրական երիտասարդությունը հայրենի ճամբարներու իր ծրագիրներով անգամ մը եւս կը փաստէ, որ պատնէշ վրայ յանձնառու կը մնայ հայրենատիրութեան արարելութեան:

Բարի երթ հայ ժողովուրդի երիտա-
սարդ սերունդին:

107,790 ԵՐՕ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԲ ՎԱԼԱՆՍԻ...

Շարունակուած 4-րդ էջէն

Վալանսի քաղաքապետին գորակցութիւնը:

Երեկոյթին ելոյթ ունեցան Վալանտին քաղաքապետ Սիդլա Տարակոն, որ լեւորհաստատեց իր և Օւլէրիկ Դոս-Վիկ շրջանի ամբողջական աջակցութիւնը՝ հաստատութեան կառուցման, որ նաեւ պիտի ընդգրկէ մշակութային կերտոն մը, շէշտատ, որ Փրանքեհայկական դպրոցը պիտի չամբէ եռակէս կողովին (Փրանսերեն, անգլերեն, հայերեն) և քաղաքի ճաշագայթիման պիտի բերէ իր նպաստը: Դուր-Լ՛Վալանտին քաղաքապետուոի ինքն Վալանտ-Ռոման քաղաքապետական աւագանիի փոխնախագահ Մարլեն Մուրիէ իր կարգին յայտնեց իր շահագրգռութիւնը ծրագիրին նկատմամբ և իր աջակցութիւնը:

Հաստատությունը, որոն կառուցումը սկսվա 9 յունւսր 2019-ին, կը հետաադըւ-դէ մշակութային եւ կրթա-կան գերազանց կեդրոն մը դառնալու նպատակը: Հա-կառակ կառոյի շինարա-րութեան համար նիթական հաիրաժշէտութեան՝ թեմի աաքնորդ կրկական աքը. 2աքադեան նշէց, որ այս նախագիծը կը գերազանցէ զուտ նիթականի սահմա-նէրը:

Հաստատության բարերար Գեորգ Արապյանսին նուիրած 700 հազար երոյոյ՝ կարելի եղած է սկսիլ շէնքի կառուցման աշխատանքները: Կամքէ անկախ պատճառներով ան չէր կրցած ներկայ ըլլալ ընդունելութեան, սակայն կատարած է 50 հազար երոյի իշխանական նոր նուիրան տուլոյն մը:

Զեռնարկին ընթացքին ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որուն մէջ Մաթիեօ Մատենեան, Անտրէ Մանուկեան, Սերժ Աւետիքեան եւ Վահէ Պերպերեան յայտնեցին իրենց գորակցութիւնը սոյն ծրագիրին:



ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յարգելի՛ ընթերցողներ, այսօր ձեզի հետ եմ, որովհետեւ առողջ եմ:

Բայց հ"չ է առողջությունը:
Մտող լույս՝ կը նշանակէ ունենալ մարմին, մտքի եւ
հոգիի ներդաշնակ գործունեութիւն եւ կարողութիւններու
լրիւ վայելում: Կայի՞նք՝ ողջ մենք՝ երկար, երախի եւ ար-
դիւնատոր կեանք ունենալ: Մտող ասարելոյ համար պէտք
է մշակենք մեր ֆիզիքական, մտային, հոգեկան եւ զգաց-
կան կարողութիւնները:

ժողովրդային առաձը կ'ընէ՝ «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ», սակայն այս իրականացելու համար նախ պէտք է պատրաստել միտքը, որպէսզի ան իւրացնէ եւ հետեւին առողջութեան պայմաններու: Ուրեմն այսօր մենք պիտի պատրաստենք մեր միտքը:

Մեր մարմնական՝ ֆիզիքական, մտային եւ հոգեկան առողջությունը մեր ամենևն թանկարժեք արտադրությունն է։ Այս հարաբերությունը վայելեցու համար պետք չէ, որ հիվանդանանք։ Մեր ընդհանուր առողջությունը եւ հիվանդությունն մը զարգացումը կախնու է արտաքին եւ մարդկային-անհատական գործոնների եւ ազդակների։

Ա. Արտաքին գործօսները եւ ազդակները կրնան ըլլալ՝
 ա. Կենսաբանական,
 բ. Սնդառական,
 գ. Ֆիզիքական, մեքենական, քիմիական եւ թունաւոր
 կազեր,
 դ. Մթնոլորտային,
 ե. Միջավայրային:

ա. Կենսաբանական գործունեություն են՝ մանրէները, ժահրերը, սուկերը եւ մակաբույծները: Ասոնք են, որ հիւսանդութիւն կը յառաջացնեն: Ասոնք կը գտնուին տարբեր-տարբեր շտեմարաններու մէջ: Այս շտեմարաններն են՝

1. Հիւանդ մարդուն քիթի հեղուկը, բերքի լորձուկը, թուրք-խուլը, կղկղաքը, մեզը, սերմասիւթուկը, արիւնը, անկողիքը, հագուստը, մազը և մորթը,
 2. Անասունները՝ կով, այծ, խոզ, շուն, կատու, չղջիկ, թռչուն, հաւ.
 3. Կարգ մը անասուններու մորթը, մեզը, միսը, կղկղաքը, մազը, բուրդը, լորձուկը,
 4. Միջատները՝ մեղ, մեղու, ոչիկ, ճանճ, թիթեռնիկ,
 5. Մեր շրջապատի հողը և ապակաւած օդը,
 6. Աղտոտ շուրթեր և ճահիճները:
- Կենսաբանական գործոնները իւանդ անձն մը առողջ անձի մը կը փոխանցուին ուղղակի և անուղղակի փոխանցումով:

Ուղղակի փոխանցումը տեղի կ'ունենայ երկու ձևերով՝

1. Անձե անձի հպումով, ձեռք սեղմումով, ողջագուրումով, հարմարեղով, բերանի ե քիթի հեղուկներով և սեռային խաբաբերութեամբ,
2. Միջատներ ե անատուկներէ մարդուկն՝ խայթուածքով ե խածուածքով:
- Անուղղակի փոխանցումը տեղի կ'ունենայ ջուրի, կերակուրի, հողի, օդի ե փոշիի միջոցով:
- Բ. Անխառնական գործօններ են՝ խարդախուած ե թունաւոր կերակուրները, կաթը, ըմպելի ջուրը, զովացուցիչ ըմպելիները:
- Գ. Ֆիզիքական, մեքենական, քիմիական ե թունաւոր գործօններ են՝ անմիջական մարմնական հարուածվմաս, կրակ, այրուածք, թունաւոր կազեր, արեւու ճառագայթ, քիմիական նիւթեր ե փոշի, վառելանիւթերու մագցութեաց, ինքնաշարժերու վառած կազերու արտադրութիւններ, այսինքն՝ բնածուխի միաթթու (CO) ե բնածուխի երկթթու (CO2).
- դ. Անտուրտային գործօններ են՝ ապականած մթնոլորտ, անբնական կիմիայ, օդի խտնաութիւն, գերջերմութիւն ե ենթաջերմութիւն, արեւի զօրաւոր ճառագայթները ե. Միջազգայրային գործօններն են՝ մեր գտնուած վայրի նաշխարհագրական դիրքը ե լոյսի տուազումը, ծովու, լողաւազաններու, բաղնիքներու, պետքարաններու, մեր անմիջական շրջապատի, տունի, դպրոցի ե գործի վայրի աղտոտութիւնը:
- Բ. Անատուրտային գործօններ. այս գործօններն են՝ տարիք, սեռ, ժառանգականութիւն, ֆիզիքական կարողութիւն, սննդառութիւն, դիմադրողականութիւն, սովորութիւններ, կենցաղ, խտական կենսեւ, մարզանք, ջուկ, ծխախոտի ե պլոքի գործածութիւն, աղմկաբար վայրեր ե ե միջավայրի հատատականութիւն, ընկերային կենսք ե անկաշակեղ, անբնական ու յոռի սեռային կենսք:

Մարմնական ընդհանուր առողջության նախապայ-
մաններն են՝

1. Ուտել առողջապահական կերակուրներ՝ բնասպիտուկ (protein) հարուստ սննդեղեններ՝ ձուկ, հալու միս, կոկոս և դիարիո մե միս, կաթ, կաթնեղեններ, պակիր, ընդդեմներ, մաքուր ջուր, առատ պտուղներ ե բանջարեղեններ, որոնք հարուստ են կենսանիւթերով և բնաթելով (fiber),
2. Ճարպ, իւր, շաքար ե աղ քիչ սպառել: Հում միս ե հակիր իւտել, կաթը միշտ եռացնել ետք խմել, սուրճը ե թելը չափաւոր գործածել,
3. Ամէն օր կանոնաւոր մարզանք ընել,
4. Հանգիստ ե բաւարար ըուն ունենալ. նուազագոյնը 8 ժամ բնաւալ,
5. Հեռու մալ կարակուած անհատներէ,
6. Փոխանցիկ հիւանդութիւն ունեցող անհատները ու ծեղը չսեմել, չողջագուրուիլ, չհամբուրել,
7. Հազալու ընթացքիւ երեւոյ դարձնել մէկ կողմ ե հազալ արմուկի մէջ. գործածել թաշկնկակ ե գոցել բերան ու քիթը: Փոնգաւոր միջոցիկ գոցել քիթը ե բերանը՝ թաշկնկակով: Հինչել մարդոց դիմաց, այլ՝ մէկ կողմ քաշուլով:
8. Ունենալ առողջ սեռային կենք,
9. Ակրիլ մաքուր ե խաղաղ միջավայրի մէջ, պահել շրջապատը միշտ մաքուր,
10. Հօիւթ ե ալքոլ չգործածել:
Մտային-ուղեղային առողջութեան նախապայմաններն են՝
1. Ունենալ սարմաակն ընդհանուր առողջութիւն: Այս նիւթ մասին նախապէս խօսեցանք,
2. Դետելի առողջապահական սննդականոնի ե ուշադիր ըլլալ՝ չգիրկուի համար,
3. Բաւարար չափով թթուածնիկ, ածխաջրատներու (carbohydrate), շաքարի ե սննդարար սննդանիւթերու մատակարարում ուղեղին: Բաւարար թթուածնիկ կը մատակարարուի թոքերէն:

տակարարուի ուղեղին, երբ բաւարար չափով թթւածի-
նով յագեցած (saturated) արիւն կը հասնի ուղեղին: Այս մե-
կը կը կարօտի առողջ շնչառական եւ սրտանօթային (car-
diovascular) համակարգի,

4. Ուղեղի քիչընտրյալ արթնությունը և մտային, իմացա-
կան ու զննարդյունակ գործադրություններ, այսինքն՝ շարու-
նակ կարգալ, տեսերիզ զրոնել, տեղեդրթիսներ հաւա-
քել, համակարգիչ գործածել, երաժշտություն ունկերդել,
նկարներ դիտել, ցուցահանդեսներու և թատրոնի ներկայ
ըլլալ, թանգարան այցելել, ընկերային կեանք ունենալ,
չէնկուսանալ,
5. Ալթու շատ քիչ խմել և ծխախոտ չծխել,
6. Բաւարար քնանալ,
7. Մարդուք ընել,
8. Մարդուք միջավայրի մէջ և աղմուկէ հեռու ապրիլ:

Հոգեկան եւ զգացական-յուզական առողջութեան
նախապայմաններն են՝

1. Հլլալ ընկերային, ունենալ հաճելի ժամանցի ժամեր՝ ընկերներու, ծնողից, թոյր եղբայրներու, հարազատներու եւ բարեկամներու հետ,
2. Անդամակցիլ քաղաքական, մարզական, մշակութային, գրական, կերպարուեստի, ելեղեցական եւ հոգեւոր միութիւններու եւ կազմակերպութիւններու,
3. Հլլալ դրական եւ լաւատես՝ դրեւ մէկ աշխատանցի մէջ, ըլլալ համբերատար, յարգել դիմացինը, մանաւանդ՝ ծնողը, տարեցը, տնօրէնը, ուսուցիչը,
4. Հերոսիկ աննշքի լաւ եւ վատ իրականութիւնները հանդիսորթել,
5. Յաւատալ աննշական կարողութիւններու,
6. Հլլալ ներդրամաւ, ծառայատէր, օգնող եւ գթասէր:

Առողջ մնալու համար կատարելով ենթ հերթական կարգ մը բժշկական ցնկութիւններ: Այս ցնկութիւնները կը յայտնաբերեն թաքուն որոշ հիւանդութիւններ: Նախքան հիւանդութեան մը զարգացումը, այս ցնկութիւնները կատարելով, կարելի է՝ ըլլալ արագօրէն ձերթագատիլ այդ ախտէն: Զերթական բժշկական ցնկութիւններու են՝

1. Բժշկական տարեկան քննիչները քննութիւն՝ արեան քաւորի եւ ճերմակ գնդիկներու, մաղձաճարպի (cholesterol), շաքարի եւ քնապիտեւորու քննութիւնները, թոքերու Զ ճառագայթային (X-ray) նկարում, պարզ սրտագրութիւն (EKG):
2. Ոսկորներու կրծքիին (calcium) խտագիւծութիւն (bone calcium densitometry): Այս քննութիւնն միջոցով կը չափուի ոսկորներուն պարունակած կրծքիին խտութիւնը: Անոր արդիւնքով կը գիտցուի նկարափխրում (osteoporosis) աստիճանը եւ կը կատարուի անոր ախտաճանաչումը: 65 տարեկանէն վեր բոլոր կիներն ու տղամարդիկը կատարելու են այս քննութիւնը: Բնական արդիւնքի պարագային, քննութիւնը կրկնուելու է երեք տարի վերջ: Իսկ նկարափխրումի ախտաճանաչումի պարագային քննութիւնը կրկնուելու է ամէն տարի:
3. Կիներու կրծքագեղձի (mammary gland) մատնային քննութիւն:
4. Կիներու կրծքագեղձի Զ ճառագայթային նկարում (mammography) եւ անորձնայային նկարում (ultrasound): Այս քննութիւնը կատարուելու է ամէն տարի՝ 40-49 տարեկան կիներուն, երկու տարին անգամ մը 50-69 տարեկան կիներուն, եւ ըստ պահանջի, 70 տարեկանէն վեր կիներուն:
5. Հաստ աղիքի դիտում (colonoscopy): Ան կատարուելու է 50 տարեկանէն ետք՝ երկու տեւերուն ալ: Եթէ առաջին քննութեամբ անբնական երեյոթք չտեսնուի, քննութիւնը կրկնուելու է 10 տարի ետք: Իսկ անբնական արդիւնքի պարագային, քննութիւնը կրկնուելու է ըստ մասնագէտ բժշիկի հայեցողութեամբ:
6. Նախաղիի մատնային քննութիւն (rectal finger examination): Նախաղիի մատնային քննութիւնը կատարուելու է բոլոր տղամարդոց՝ 45 տարեկանէն ետք եւ ամէն տարի: Ան կը կատարուի շագանակագեղձի (prostate gland) վիճակ գնահատելու համար:
7. Արեան մաղձաճարպի (cholesterol) քննութիւն: Տղամարդիկ կատարելու են այս քննութիւնը 40 տարեկանէն ետք եւ ամէն տարի, իսկ կիները՝ դաշտանադադարէն (menopause) ետք եւ ամէն տարի: Արեան գերմաղձաճարպութիւնը (hypercholesterolemia) կը նախագգուշացնէ մեզ սրտանոթային հիւանդութիւններու գոյութեան նկատմամբ:

8. Կոկլանքի արեան գոյութեան քննութիւն: 9. Արգալանալիզի քսուկի (cervical pap smear) ախտաբանակէն (pathologic) քննութիւն: Այս քննութիւնը իզական տեղի մօտ առաջին անգամ կատարուելու է արդունքէն (puberty) 3-4 տարի ետը: Ան կրկնուելու է երկու տարին անգամ մը՝ մինչեւ 70 տարիքը:

10. Տեսողութեան քննութիւն՝ ըստ պահանջի. Շաքարախտաւոր, արեան զերմնշուր (hypertension) եւ զերմաղծածարպութեան ունեցողներ, ընտանիքի մէջ անկաքող (cataract), խածմաթութեան (glaucoma), ցանցեղի շերտաուրով (retinal detachment) եւ ցանցեղի ապատեւում (macular degeneration) ունեցող անհատներ պարտաւոր են աջի յաճախակի քննութեան ենթարկուելու:

Կան շատ մը ախտանշաններ, որոնց պէտք չէ անուետիկ առողջ եւ հանգիստ կեանք մը ունենալու համար: Այս ախտանշաններէն կարեւորագոյններն են՝

1. Շանրուրեան անակկկալ կորուստ. Սիհարսկալ, շաքարիստ, գերլահանազեղծութիւն (hyperthyroidism), արիւնակաւ ուռնը-քաղցեղ, ջրագրկուծ-ջրակորուստ (dehydration) եւ հոգեբանակախ խանգարումներ,
2. Մսայուն գերշերմութիւն, բորբոքումներ,
3. Անակկկալ շնչարգելութիւն, շնչահեղծութիւն (dyspnea), խաժամութիւն (cyanosis), արիւնստ կոկղանք եւ մեզ, արիւնխառն փսխում եւ խուխ, յօդերու կարմրութիւն՝ ջերմով եւ ցաւով միատեղ.
4. Դաշտանէ (menstruation) դուրս հեշտոցային (vaginal) արիւնահոսութիւն, դաշտանի շարունակական խանգարում,
5. Յեշտոցային անբնական հեղուկային եւ կամ թարախային հոսք,
6. Տեսողութեան եւ լսողութեան անակկկալ կորուստ,
7. Յիշողութեան անակկկալ կորուստ:

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Մոնրեալ, 17 փետրուար 2019
(Շար. 1)

ԳԼԽԱՒՈՐ ԹՇՆԱՄԻՆ

Քաղաքացիական պայմանագիր կուսակցության օրերս տեղի ունեցած համագումարում այս ուժի ոչ երկրորդական դեմքերը դարձեալ խօսել էին թշնամիների, իրենց պատերազմ յայտարարածների, այլ խօսքով, հակայեղափոխականների և նրանց դաւադրությունների մասին: Կասկած չկայ, որ այս թեման եւ անցեալի ուրուականների հետ կոխը լինելու է վերջիններիս գլխաւոր ասելիքն ու գործողութիւնների մղող մտայնութիւնը՝ մինչեւ իրենց իշխանութեան աւարտը: Իմ կարծիքով, սակայն, Հայաստանի ներկայ իշխանութեան գլխաւոր թշնամին ժամանակն է: Որ ժամանակն իր դէմ է աշխատելու՝ Ն. Փաշինեանը հրաշալի հասկանում էր դեռ այն պահին, երբ, սահմանադրական կարգի կոպիտ ոտնահարմամբ, խորհրդարանին պարտադրեց ինքնասպանութիւն եւ երկրին՝ շուտափոյթ ընտրութիւններ: Իրապէս էլ իշխանափոխութիւնից մօտ մէկ տարի անց ոչ միայն Նիկոլ Փաշինեանը, այլեւ **թաքսու** վարորդները, տնային տնտեսուհիները եւ Նորթթուի ու ջղագար «սփիւռքահայերն» էին հասկանում, որ եթէ Նոյն օրերին ընտրութիւններ տեղի ունենային «թաւըշեայ», «ոչ բռնի», «ժողովրդավար» «յեղափոխականները» հաւաքելու էին միանգամայն այլ քանակի ձայն՝ ամենայն հաւանականութեամբ լինելով առաջին տեղում:

Ի դեպ այդ կացութիւնը, հաւանաբար, կը թելադրեր վերջիններիս որդեգրելու մի փոքր այլ վարքագիծ, մասնատրապէս չաւել հերթական ոտնձգութիւնը սահմանադրական կարգի դէմ՝ կաթուածահարելով երկրի ողջ դատական համակարգի գործունեութիւնը: Բայց խօսքն այս մասին էլ չէ, այլ այն, որ ամենագործամանկը բացայայտում է Նոր իշխանութեան անկարողութիւնը՝ երկրի քաղաքական, տնտեսական, ընկերային առաջընթացի ապահովման հարցերում:

Խնդիրն այն է սակայն, որ շատ բացասական գործընթացներ հիմնարար, փաժամանակ խորքային բնոյթ ունենալով՝ առայժմ լուրջ տեսանելի են բոլորի, մասնատրապէս Նիկոլ Փաշինեանին կուռք սարքած զանգուածի մի մասի համար:

Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ այլ մարզերի մօտակայ հեռանկարի վրայ մեծ ազդեցութիւն են ունենալու այնպիսի երեւոյթներ, ինչպիսիք են՝ իշխանութիւնների ապակառուցողական ներհասարակական-ներքաղաքական գործելակերպը, արտաքին քաղաքական (այդ թւում՝ Արցախի հարցում) յստակ կողմնորոշումների եւ հայեցակարգերի բացակայութիւնը, տնտեսական զարգացման ծրագրերի եւ պատկերացումների չգոյութիւնը, կառավարման հա-



մակարգի ձեւախեղումը, երկրում հեղինակապետական կոշտ վարչակարգի հաստատման ճիգը եւ, վերջապէս, երկրի ողջ վարչական ու խորհրդարանական **քաւորային** անձեռնիաս ներուժը:

Անելի առարկայական լինելու համար փաստեց, որ այս Նոյն պատճառներով 2019 թուականին կտրուկ պակասել են արտաքին ու տեղական ներդրումները, խորհրդարանը աշխատում է անիրաժշտ-հնարաւորի ամենացածր արդիւնատուութեամբ, հնարաւոր են դրսից ստացուող ապրանքների շօշափելի թանկացումներ, որոնք էլ կարող են տոմիւնոյի ազդեցութիւն ունենալ ապրանքների ու ծառայութիւնների թանկացումների առումով, պատճառ դառնալով Նաեւ ներքին արտադրանքի թանկացմանը եւ որոշ արտադրութիւնների կայունածաւար լինելուն: Ներքին խմորմներն ու արտաքին յարաբերութիւնների անյստակութիւնը կարող են աւելացնել երկրի Նկատմամբ կիրառուող ուղղակի եւ անուղղակի ճնշումներն ու բարդացնեն իրավիճակը արցախեան բնագծում:

Կարծում եմ՝ ասուածը չափազանցութիւն չի համարուի քանի որ այն, ինչի մասին խօսում է, արդէն իսկ տեսանելի ծիւրը է տուել: Այնուամենայնիւ, սրանք եթէ հիմնականում խորքային գործընթացներ

լինելով՝ ահագանգի առիթ են երեւոյթների ծալքերը տեսնողների համար, ապա ժողովրդի մի մեծ հատուած դրանց ազդեցութիւնն իր մաշկի վրայ թոյլ է զգում եւ հակուած է դեռ սպասելու գեղեցիկ խոստումների իրագործմանը:

Չի կարելի ասել, որ իշխանութիւնը առկայ վիճակը եւ զարգացումների ընթացքը չի տեսնում, բայց հակամիջոցների չձեռնարկմամբ, Նա ոչ թէ հակուած է ինքնասպանութեան, այլ պարզապէս չի տեսնում ելքերը, կամ իր սխալ պատկերացումներով զնում է կեղծ թիրախների ետեւից: Կարելի է ի հարկէ ամէն օր մի քանի աղմկոտ դատավարութիւններ կազմակերպել երկրում, կարելի է անընդհատ խօսել Նախկին ոգետրութիւնը, այս կամ այն Նախկին ու ներկայ պաշտօնեային պատժուած տեսնելու կիրքը, եւ մարդիկ աւելի շատ մտահոգւում են, թէ ի՞նչ է լինելու իրենց ու իրենց երկրի բազում հիմնահարցերի հետ:

Մի օր այս մարդիկ իշխանութեանը հարց են ուղղելու. բաւ չէ՞ յետյեղափոխական բարդութիւններով արդարացնել սեփական անճարակութիւնը, «վեթիկների», հաշուեյարդարների անիրաժշտութեամբ ֆռացնել մի ողջ ազգի, երբ, այսպէս կոչուած, յեղափոխութեան հետեւանքում ոչ դասակարգային բախում է եղել, ոչ աւերիչ պատերազմ ու բռնութիւններ, ոչ վարչա-իրաւական համակարգերի ու տնտեսական կացութեանների փլուզում:

Ի հարկէ գլխաւոր մտահոգութիւնը մնում են ժողովուրդն ու երկիրը, որոնք կարող են ճակատագրական կորուստներ ունենալ, քանի դեռ երկրի դէպը այս ու այն կողմ են թափահարում պատասխանատուութեան զգացումից զուրկ փորձարարները:

Իշխանութիւնը լուրջ ընտրութեան առջեւ է կանգնած եւ եթէ կարծում է, որ դատական համակարգը ճորտացնելով, այլընտրանքային կարծիքի դէմ ընկերային ցանցերի քերծներին քսի տալով, կեղտոտ փողեր օրինականացնելով՝ երկրի իրավիճակը բարելաւելու է, ապա խորհուրդ կը տանք յաճախակի Նայել ժամացոյցին. գլխաւոր թշնամին ժամանակն է, որին ո՛չ հնարաւոր է վարկաբեկել, ո՛չ ծեփել պատերին, ոչ դատել եւ ո՛չ էլ շրջափակել ու ընթացքը կասեցնել:

ԱՐՏԱՇԵՆ ՇԱՀԱՍՏԵԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱԶ - ՀԱՐՊՈՅԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԱՄՍՎԵՐԶԻ ՀԱՆԴԷՍ

Շաբաթ, 15 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին տեղի ունեցաւ Հայ կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան բարձրագոյն վարժարանի մասնկապարտեզի ամսվերջի հանդէսը, Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ «Պետողեան» սրահին մէջ, ներկայութեամբ վարժարանի տնօրէնութեան, ըլոր վարժարաններու տնօրէնութեան եւ ներկայացուցիչներու, ընկերային բարեսիրական եւ լրատուական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, պատուարժան հիւրերու, ինչպէս Նաեւ վարժարանիս անձնակազմի անդամներու, ծնողներու, հարազատներու եւ բարեկամներու:

Հանդէսը սկիզբ առաւ Լիբանանի, Հայաստանի եւ վարժարանի քայլերգներով, որոնցմէ ետք ջասներկու Շաղիկները մուտք գործեցին սրահ՝ ծնողներու բուռն ծափահարութեամբ եւ մեկնաբանեցին «Ծնողների երգը», որմէ ետք ինչեցուցին «Հիլուա եա պալատի» երգը:

Ապա խօսք առաւ վարժարանի վարչական մեծաւոր Արամ Գարատաղեանը, որ ըսաւ. «Երեսուն տարիներ առաջ, 1989-ին, երեք տարեկան հասակիս, առաջին անգամ ըլլալով ելոյթ ունեցայ այս բեմին վրայ՝որպէս այս վարժարանի բողբոջ դասարանի աշակերտ: Ամէկուտ, դողդոջուն ծունկերով, թերեւս ալ՝ արցունքոտ աչքերով... Այսօր ձեր դիմաց ինքնավստահ կանգնիւք կը պարտիմ այս վարժարանին եւ յատկապէս այս մանկապարտեզին... Կրնայ ըլլալ, որ այսօր Հայ կաթողիկէ Ս. Խաչ - Հարպոյեան բարձրագոյն վարժարանի համեստ պատախանատուներէն մէկն եմ, բայց կը մնամ յաւերժ անոր հպարտ շրջանաւարտը»:

Գարատաղեան Հարունակեց՝ ըսելով. «Պատահական չէ, որ մեր մանկապարտեզի դասարանները կը կոչուին Ծիլ, Բողբոջ, Կոկոն եւ Շաղիկ, որովհետեւ անոնք են գարունը ոչ միայն վարժարանիս, այլ Նաեւ՝ զաղութիւն, երկրին ու ազգին... Հայկական վարժարանի մանկապարտեզը միակ տեղն է, ուր ձեր եւ մեր զաւակներուն փոքրիկ ձեռքերը կը սորվին հայերէն գրել, անոնց անուշ շուրթերը կը սորվին հայերէն աղօթել եւ արտասանել ու անոնց միտքերը կը լուսանորոշին հայկական գիտելիքներով եւ արժեքներով... »:

Ան Նաեւ Հնորհակալական խօսք ուղղեց բոլոր այն անհատներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք Նեցուկ կանգնեցան վարժարանին՝ 2018-2019 դպրոցական տարեշրջանի ընթացքին, ինչպէս Նաեւ՝ բոլոր անոնց,որոնք Նալաստեցին սոյն ձեռնարկի յաջողութեան: Գարատաղեան Նաեւ յայտնեց, որ հակառակ բոլոր դժուարութիւններին՝ ունեցան բարիքներով բեղուն տարի մը, Հնորհիւ Աստուծոյ հովանիին, Տանն Կրիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս-պատրիարքի հայրական խնամքին, ինչպէս Նաեւ՝ Գաբրիէլ թ. ծ. վ. Սուրբատանի գլխաւորած Հայ կաթողիկէ պատրիար-



քութեան Վարժարաններու Վարչական խորհուրդի ցուցմունքներուն եւ հետեւողութեան: Ան Նաեւ բարձր գնահատեց վարժարանի մանկապարտեզականութիւնը Լեւա Տերտերեանի եւ անոր ուսուցչակազմը, որոնք ամբողջ տարուան ընթացքին կարելի անկարելիին խառնելով՝ փոքրիկներուն տուին լաւագոյնը:

Այնուհետեւ 22 Շաղիկները ստացան իրենց վկայականները՝ ձեռամբ վրաժարանի տնօրէն Գրիգոր վրդ. Պատիշահի, ակադեմական մեծաւոր Նելլի Տեր Ղազարեանի, վարչական մեծաւոր Արամ Գարատաղեանի եւ մանկապարտեզականութիւնը Լեւա Տերտերեանի:

Յայտագրի երկրորդ բաժինով Շաղիկ դասարանը քանչեղի կերպով ներկայացուց 20 վայրկեան տնտեսութեամբ «Թզուկ-մզուկը» թատերախաղը, որուն նիւթը մտադրացումն է Հայաստանի Առաջին տիկին Լուսինէ Սարգիսեանի: Թատրոնին բարոյախօսութիւնն էր. «Բարիքները իրենց չարիք ընողներու բարիքով կը փոխադարձեն... իսկ բարին միշտ կը յաղթահարէ չարին»: Թատերախաղէն ետք Կոկոն դասարանը ելոյթ ունեցաւ հայկական պարով մը, որմէ ետք անոնք մեկնաբանեցին «Միլի եա ժաննաթ պիլատի» եւ Ծարլ Ազնաւուրի «Փուր թուա Կամիլը» երգերը: Ապա Շաղիկ դասարանը ներկայացուց «Պելլա Լուսին» պարը: Բողբոջ դասարանը ելոյթ ունեցաւ «Թաքա թաքա» պարով, որմէ ետք Ծիլ դասարանը ներկայացուց «Պալքան» պարը: Այնուհետեւ Ծիլ եւ Բողբոջ դասարանները մեկնաբանեցին «Մէկ փոքրիկ աշխարհ» երգը, որմէ ետք Շաղիկ դասարանը ներկայացուց «Պատնա Նուալիլ էլ ժաու»: Յայտագիրը

փակուեցաւ բոլոր դասարաններուն կողմէ «Հայաստան» երգի կատարողութեամբ:

Աւարտին վարժարանի տնօրէնութիւնը ծաղկեփունջերով պատուեց մանկապարտեզի ամբողջ անձնակազմը, որմէ ետք վարժարանի տնօրէն Գրիգոր վրդ. Պատիշահի իր երախտագիտութիւնը յայտնեց Նախ Ամենակալ Աստուծոյ, ապա Հայ կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանի մեծ ընտանիքին, ինչպէս Նաեւ ծնողներուն, որոնք իրենց ամենաթանկագինը վստահած են վարժարանին, եւ երեկոն փակեց «Պահպանիչ»-ով:



ԱՌՈՂՋԱԿԱՆ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ
ԿՐԱՆ ԶԱՐԳԱՆԱԼ
ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՊԱՏՃԱՌՈՎ

Բրիտանական «Մայն» ընկերակցութեան փորձագետներուն կարծիքով, գրասենեկային աշխատանքը կրնայ առողջական հարցեր ստեղծել: Փորձագետներուն խօսքով, գրասենեակներու մէջ աշխատողները պէտք է շատ ուշադիր հետեւին իրենց ինքնագզացողութեան, ինչպէս նաեւ մասնագետներու խորհուրդներուն եւ ցուցմունքներուն՝ առողջական խնդիրներէ հեռու մնալու համար:

Ստորեւ կը ներկայացնենք այն խանգարումները, որոնք կրնան զարգանալ գրասենեկային աշխատանքի պատճառով:

ԸՆԿՃԱԽՏ



Մասնագետները կը պնդեն, որ գրասենեակին մէջ աշխատողներուն մեծ մասը իրենց աշխատանքը կ'ընկալեն որպէս կեանքի գլխաւոր **սթրես**: Մշտապէս փակ տարածութիւններու մէջ գտնուիլը, աղմուկի ազդեցութիւնն ու մարդոց բազմութիւնը որական ազդեցութիւն չեն ունենար աշխատողներուն հոգեկան առողջութեան վրայ: Բացի ասէլ՝ լուրջ ազդեցութիւն կ'ունենայ նաեւ յոգեբը զսպելու անհրաժեշտութիւնը, ինչը նոյնպէս կրնայ ընկճախտի գործօն դառնալ:


ԳԻՐՈՒԹԻՒՆ



Գիտնականները յայտնաբերած են, որ գրասենեակի մէջ երիտասարդ աշխատողներու գրեթէ 50 առ հարիւրը կը գիրնայ առաջին տարուան ընթացքին: Ասիկա պայմանաւորուած է վերոյիշեալ ընկճախտով, քանի որ անէլ ազատելու որպէս միջոց՝ շատեր կը դառնան ուտելիքի գերին:

Գիտնականները կարեւորութեամբ կ'ընդգծեն նաեւ այն փաստը, որ գրասենեկային աշխատանքը սովորաբար կ'ենթադրէ նստակեաց կենսակերպ, ինչը չի կրնար անհետեւանք մնալ կազմուածքին վրայ:

ՈՂՆԱՇԱՐԻ ԴԻՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ



Գրասենեակի մէջ աշխատողները յաճախ կը տառապին ուտելու, վիզի, մէջքի, դաստակներու ցաւերէ: Երկար ժամանակ նստած դիրքով մնալը նաեւ կը լարէ անոնց ազդրերու մկանները, իսկ սիւալ դիրքը կը վնասէ ողնաշարին:

«Յինգ տարի գրասենեկային աշխատանք կատարելէ ետք, մարդուն մէջ կրնայ զարգանալ **թորմպոզ, աթերոսքլերոզ** կամ **թուրք**: Անոնց առաջացման վրայ կ'ազդեն սիւալ սննդակարգը, գիրութիւնը եւ նստակեաց կենսակերպը: Տասը տարի գրասենեկային աշխատանք կատարելէ ետք, մարդոց մօտ յաճախ կը զարգանան ստամոքսատապը եւ երկրորդ տիպի շաքարախտը», կը նշեն փորձագետները:

ՎԱՐՉՈՒ
ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

Անթիլիաս-Մըզիեր կահաւորուած, 3 ննջասենեակ, հիւրասենեակ, 2 պատշգամ, 3-րդ յարկ, ծովափայտէ: Ամսական 700\$: Դեռ. 03-210051:

ՈՒՍՈՒՑԻՉԻ ԿԱՐԻՔ

Քաղաքի Դայ անտարանական քոլեճը կարիքը ունի վկայեալ ուսուցիչներու՝ զանազան նիւթերու մէջ: Դետաքըրորտներ իրենց «Սի. Վի.»-ն կրնան դրկել principal@aecbeirut.edu.lb հասցէին

ԵՂԱՆԱԿԻ ԴԻՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԵՒԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Արեւահարութիւնը առաջին աստիճանի մորթի այրելու է, որուն պատճառը չափազանցուած ձեւով արեւին ճառագայթներուն պարզելին է գեղեցիկ գոյն ստանալու համար:

Արեւահարութիւնը պատճառ կ'ըլլայ, որ մորթին վրայ կարմիր արատներ յայտնուին եւ խնդրոյ առարկայ անձին ցաւեր պատճառեն: Այս արատները կը յայտնուին արեւին պարզուելէ քանի մը ժամ ետք, ապա մորթը կը սկսի կեղտըլիլ:

Աւելի յառաջացած պարագաներու, մորթին վրայ կը յայտնուին ուռեցքներ. պէտք չէ զանոնք պայթեցնել որպէսզի բորբոքում չառաջանայ:

Արեւահարութիւն մը, միջին հաշուով 2-3 օր կը տեւէ, զայն դարմանելու համար պէտք է մորթը ծեփել յատուկ սերով. հրաժարիլ արեւին պարզուելէ եւ փորձել պայթեցնել մորթին տակ յայտնուած ուռեցքները:

Արեւահարութիւն մը շատ անելի ծակ կ'ըլլայ, եթէ արեւին վնասակար ճառագայթները թափանցած ըլլան մորթին խոր խաւերը. նման պարագայի, անպայման բժիշկին պէտք է դիմել:

Արեւահարութիւնը յաճախակիօրէն կրկնուելու պարագային, կրնայ մորթի քաղցկեղ յառաջացնել:

Փաստուած է, որ բաց գոյն մորթ ունեցող անձերը անելի զգայուն են արեւի ճառագայթներուն եւ անելի ենթակայ՝ արեւա-



հարութեան:

ԳԻՏՔԵ, ԹԵ...

Միայլ է այն կարծիքը, որ երբ երկինքը ամպոտ է, արեւահար ըլլալու վտանգ չկայ:

Միայլ է այն կարծիքը, որ եթէ հոգեկան տակ նստած ենք, 100 տոկոսով պաշտպանուած ենք արեւի վնասակար ճառագայթներէ:

Ծիշոյ է, որ օրուան որոշ ժամերուն (12-էն յետմիջօրէի 4-ը) արեւը ա'լ անելի վնասակար է:

Ծիշոյ է այն կարծիքը, որ կարգ մը ուտելիքներ կ'օգնեն, որպէսզի մեր մորթը գեղեցիկ գոյն ստանայ:

Միայլ է այն կարծիքը, որ երբ ջուրին մէջ ենք, արեւահարութենէ պաշտպանուած ենք:

Ծիշոյ է այն կարծիքը, որ ծովափին ժամը անգամ մը պէտք է վերանորոգել արեւէն պաշտպանող սերը:

ՄԵՐ ԱՌՈՐԵԱՆ ԴԻՄԱՑՆՈՂ ԴՆԱՐՔՆԵՐ

ՓԱՅԼԱԹԻԹԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ԻՐԵՐԻ ԶԱԳԱՐ ԳՈՐԾԱԾԵԼ



Եթէ ձագարը չենք գտներ, կամ փիքնիքի ընթացքին ձագարի կարիք եղաւ, կարելի է շատ արագ փայլաթիթեղով ձագար ձեւաւորել եւ հարցը լուծել:

ԴԱԳՈՐԱՏԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ
2 ԿՈՂՄՈՎ ԱՐԴՈՒԿԵԼ



Փայլաթիթեղը դնենք հազուստին տակ եւ հազուստը արդուկենք. միաժամանակ երկու կողմերն ալ կը հարթուին:

ՄԿՐԱՏԸ ՍՐԵԼ



Մկրատին շեղբերը սրելու համար 7-10 կտոր փայլաթիթեղ կտրտենք:

ՄԱՐԿԱՑՆԵՐՈՒ ԿԵՆՆԵՐ
ԵՐԿԱՐԱԶԵԼ



Եթէ մարտկոցներու օգտագործման ժամկետը աւարտած է, անոնց գլուխէն-

րուն կտոր մը փայլաթիթեղ դնելով՝ կարելի է անոնց կեանքը երկարել:

ԱՐԾԱԹԵԱՅ ԻՐԵՐԸ ՄԱՐԵԼ



Լուացարանին յատակին փայլաթիթեղ փռել, վրան անեցնել սոտա, աղ եւ եռացած ջուր: Իրերը միորձել ջուրին մէջ եւ պահել որոշ ժամանը մը:

ՏԱՊԱԿԸ ԱՅՐԵԼԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ



Տապակին յատակին փայլաթիթեղ փռենք եւ ապա տապակենք հաւկիթ, սմբուկ եւ այլն...

ԿՐԿԵԹԻ ԿԱՐԱՊԱՐՆԵՐ ԶԵՆԱԽՐԵԼ



Փայլաթիթեղով կարելի է կրկնելի որել կաղապար պատրաստել, նոյնիսկ՝ շուկան չվաճառուող տեսակներ:

ՍՈՍԻՆԶՈՎ ԶԵՆԻ ԾԱՆՐԱՄԱՍԸ ՄԱՐԵԼ

Փայլաթիթեղով կրնանք շատ արագ մաքրել տսիկնով գէնքին գլուխը, ուր տսիկնը քարացած կ'ըլլայ:



ՇԱԲԹՈՒՆԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐԱՆԱՑԱՆ

Ահա եկան աշնանային թուխ պօրեր, Մաղմղում են մանրահատիկ կաթիլներ. Ծառերն իրանց տերեւներից մերկացան, Կռուկները շարան-շարան անց կացան:

Սեւացել է դաշտը անթիւ ցելերով, Բայց մի կողմից դեռ վարում են արօրով, Սերմնացանը գոգնոցն առած սերմնացուն, Սերմ է ձգուում աղաչելով աստծուն:

«Ո՛վ տէր աստուած, դո՛ւ իմ ցանքը պահպանես, Առատ անձրեւ, կարմիր արեւ չընկայես. Մեկ բուն ահա ես տալիս եմ մկներին, Այս մեկ բուն էլ ագռակներին, ծտերին:

Բայց մարախը գոհ չի մնալ մի բռնով, Երկու կը տամ, թող կշտանայ տրանով. Մեկ բան էլ կայ, որ անուրը չեն տալիս, Այն դու գիտես... վերելից է նա գալիս:

Դու սրանցից արտըս պահիր անվասա, Ես տերտերից չեմ խնայիլ կալամաս. Վանկաններ, գործակալներ ինչքան գան, Բոլորեքեանք առատ բաժին կը ստանան:

Կ'երթամ Մարաս խունիկ ու մոմով, մատաղով Միայն արտըս դու պահպանիր ապահով: Էլ ի՞նչ ասեմ, աստուած, ինքըղ լաւ գիտես, Թէ ինչ պարտքի, պատուհասի մէջ եմ ես:

Գող-աւազակ մի կողմից են կողոպտում, Դարտաւորըս միւս կողմից է ինձ խեղդում: Դրանց ձեռքից, եթէ մի բան է մնում, Այն էլ գայլի կամ ցաւի է գոհ դառնում:

Մի տուն լիքը երեխքս մերկ, քաղցած, Տարին առատ, բայց ես չունիմ կորեկ հաց. Յոյսըս ահա ոտքիդ տակին փռած է, Զո սուրբ աչքը սքրա վըրայ տարածէ:

ԴԱՅԱՐՈՍ ԱՐԱՅԵԱՆ

ԴԵՍՔԻ ԼՈՍԻՈՆՆԵՐ

Լոսիոնները հեղուկներ են, զորս կը գործածենք դեմքը յատուկ կաթով լաւապէս մաքրելէ ետք:

Լոսիոնով օծուած դեմքը պատրաստ կ'ըլլայ ընդունելու ցերեկային, գիշերային, ինչպէս նաեւ խոնաւցնող (**հիտրաթանթ**) սերերը:

Տունը պատրաստուած **լոսիոնները** կ'ըլլան նոյնքան ազդու, որքան՝ շուկան պատրաստուածները: Տունը պատրաստուածները թէ՛ անելի աժան են եւ թէ՛ քիմիական նիւթերէ զուրկ: Ստորեւ՝ քանի մը նմուշ:

ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹ ԴԱՄԱՐ

Գաւաթ մը կտրտուած ելակ, եւ գաւաթ մը հանքային ջուր հարիչէ անցնել, անեցնել կէս տուրճի գաւաթ օղի: Ստացած հեղուկով դեմքը մաքրել առտու եւ երեկոյեան:

ԻՐԱՏ ՄՈՐԹ ԴԱՄԱՐ

Գաւաթ մը վարդի թերթիկի անեցնել գաւաթ մը եռացած հանքային ջուր եւ ծածկել: 20 վայրկեան ետք քամոցէ անցընել, անեցնել կիտրոնի մը հիւթը եւ ստացուած հեղուկով դեմքը օծել օրական 2 անգամ:

ՉՈՐ ՄՈՐԹ ԴԱՄԱՐ

Կէս աղաւթտոն գաւաթ մը հանքային ջուրով հարիչէ անցնել, անեցնել ապուրի դգալ մը վարդի ջուր եւ 2 ապուրի դգալ հեղուկ կաթ: Այս հեղուկով դեմքը մաքրել օրական 2 անգամ:

Շատ կարեւոր է, որ **լոսիոնի** պատրաստութեան համար օգտագործուող իրերը՝ հարիչ, դանակ, գաւաթ, դգալ, ինչպէս նաեւ բաղադրիչները՝ պտուղ, ջուր եւ այլն... ըլլան չափազանց մաքուր եւ նոյնիսկ՝ հականեխուած:

ԽՈՂԱԳԻՐ

ԿԱՐՄԻՐ ԿԱՐԱՄԲՈՎ ԱՐՑԱՆ



Բաղադրութիւն
700 կրամ կարմիր կաղամբ
1 ստեպլին
1 կանաչ խնձոր
2 ապուրի դգալ խնձորի քացախ
2 ապուրի դգալ նարինջի հիւթ
3 ապուրի դգալ կիտրոնի հիւթ
1 ապուրի դգալ ձեթ
1/2 ապուրի դգալ քիմիոն

Պատրաստութիւն

Կաղամբը շատ մանր քարդել, ստեպլինը կեղտուել եւ բարակ ցալկներու վերածել եւ կամ քերոցէ անցընել: Բանջարեղէնները աղցանի ամանի մը մէջ փոխադրել, վրան քացախը անեցնել եւ քառորդ ժամ սպասել: Մինչ այդ փոս ամանի մը մէջ խառնել կիտրոնի եւ նարինջի հիւթերը, անեցնել ձեթն ու քիմիոնը եւ 2 ապուրի դգալ սովորական ջուր: Խնձորները կեղտուել եւ, ըստ ճաշակի, կտրտել եւ անեցնել կաղամբին եւ ստեպլինին վրայ: Թացանը անեցնել եւ միատեղ խառնել ու հրամցնել: Այս բաղադրատոմսին մէջ աղ չկայ. կարելի է անեցնել՝ ըստ փափաքի:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ՔԱՆԱՏԱՅԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ...

Շարունակուած 4-րդ էջէն

Ընդունելութեան ընթացքին դէսպանը ծանօթացաւ քանատահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչ-ներուն:

ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեանը եւ ՀՅԴ Զանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Վաչէ Շամլեանը դէսպանին հետ առանձնագրոյցի ընթացքին յայտնեցին, որ դեսպանատան հիմնադրութենէն ի վեր Զանատայի Հայ դատի յանձնախումբը սերտօրէն համա-գործակցած է դեսպանատան հետ, եւ խոստացան յառա-ջիկային յատուկ հանդիպման մը ընթացքին իրազեկ պա-հել դէսպանը՝ քանատական քաղաքական գետնի վրայ Հայ դատի յանձնախումբին ծաւալած քաղաքական բազ-մաշերտ գործունէութեան մասին:

Ընդունելութեան ներկայ էին՝ ՀՅԴ Բիւրոյի, ՀՅԴ Զա-նատայի Կեդրոնական կոմիտէի, ՀՅԴ Սոնրեալի, Լաւալի, Օթթաուայի եւ Զեմպրիծի կոմիտէներու ներկայացուցիչ-ները, Օթթաուայի Հայ դատի յանձնախումբի ներկայա-ցուցիչը, Համազգայինի Կեդրոնական վարչութեան ներ-կայացուցիչը, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի եւ Համազգայինի Զանա-տայի Շրջանային վարչութեանց ներկայացուցիչները, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնը, ՀՕՄ-ի Լա-ւալի, Սոնրեալի եւ Օթթաուայի ներկայացուցիչները, ՀԲԸՄ-ի պատուիրակութիւնը եւ համայնքի անհատ ներ-կայացուցիչներ:

Կ՝ՈՒՇՈՒԻ

«Bechmezine Country Club»-ը կարիքը ունի վե-ր ա կ ա ց ու Վ ա տ ա ս ի ա - նատուի մը, կեցութիւնը՝ ապահովուած: Դիմել՝ հեռ. 03-100482:

«ԱԶԴԱԿ»Ի ՀՆՌԱՍԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԴԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- (01)258526, (01)260115 եւ (01)241274:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՊՕՐՈՍ ՍՆԱՊԵՆԻ մահուան 5-րդ տարելիցին առի-թով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրա-կի, 23 յունիս 2019-ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍՕՍԻ ԶԻԼԻՆԿԻՐԵՆԻ մահուան Բ. տարելիցին առի-թով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրա-կի, 23 յունիս 2019-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

www.hamazkayin.com



Ի՞նչ կ'ըսեն ՄՍՏՂԵՐԸ

Խոյ (21 մարտէն 20 ապրիլ)

Մի՛ ընդգծիք, եթէ տարբեր կարծիքներու հանդիպիք: Մէկ կողմ մի՛ դնէք ձեր պետական թղթածրարները: Ստիպ-ւած՝ պիտի յստակացնէք ձեր տեսակէտը կամ ներողութիւն խնդրէք ձեր կեցուածքին համար:

Տուլ (21 ապրիլէն 21 մայիս)

Պէտք չէ յոգնիք այս շրջանին: Թշնամական կեցուածք-ներէ հեռու մնացէք: Համբերող եղէք ձեր ընկերներուն հաւ-դէպ եւ մի՛ մեղադրէք զանոնք՝ իրենց կեցուածքին կամ տարբեր տեսակէտին համար:

Երկուորեակ (22 մայիսէն 21 յունիս)

Հարցերը խոհեմութեամբ լուծեցէք եւ որոշում մի՛ տաք՝ առանց մասնագետներուն կարծիքը առնելու: Ձեր սուղ ժա-մանակը մի՛ կորսնցնէք երկրորդական հարցերով:

Խեցեցտիկ (22 յունիսէն 23 յուլիս)

Հանգիստ պիտի ըլլաք այս շրջանին: Ձեր հանդարտու-թիւնը պիտի վերագտնէք եւ սիրալիր ժամանակ պիտի ան-ցընէք ձեր սիրելիին հետ: Պէտք է կրկնապատկէք ձեր ճիգե-րը՝ յաջողութեան հասնելու համար:

Առիւծ (24 յուլիսէն 23 օգոստոս)

Ձեր ընտանիքի անդամներէն մէկը ձեր օգնութեան կա-րիքը պիտի ունենայ, մի՛ վարանիք օգնելու: Տազնապէցնող շրջան մըն է, բայց համբերող եղէք ու հանդարտ:

Կոյս (24 օգոստոսէն 23 սեպտեմբեր)

Պիտի յաջողիք լուծումներ գտնել ձեր հարցերուն: Ծա-րայեղ կեցուածքներէ հեռու մնացէք: Հաշտարարի դեր պի-տի կատարէք ձեր գործի շրջանակին մէջ: Իմաստուն միտ-քերով օժտուած էք այս շրջանին:

Կշիռք (24 սեպտեմբերէն 23 հոկտեմբեր)

Մի՛ սպասէք, որ առիթները ձեր քով գան: Աշխատեցէք փնտռել ու ձեռք ձգել զանոնք՝ առանց ժամանակ կորսնցնե-լու: Զննութեան պիտի յաջողիք եւ փայլուն ապագայ մը պի-տի ունենաք:

Կարիճ (24 հոկտեմբերէն 23 նոյեմբեր)

Ձեր տրամադրութիւնը պիտի բարելաւուի: Դժուար իրա-կանութիւն մը պիտի ապրիք: Չօրաւոր կամքով պիտի աշ-խատիք իրականացնէք ձեր նպատակները:

Աղեղնաւոր (24 նոյեմբերէն 21 դեկտեմբեր)

Մի՛ աճապարէք որոշում տալու՝ առանց ձեր ընկերնե-րուն կարծիքը առնելու: Բախտէ զուրկ շրջան մը պիտի ըլ-լայ, ուշադիր եղէք: Հոգ տարէք ձեր առողջութեան:

Այծեղջիւր (22 դեկտեմբերէն 20 յունուար)

Մի՛ վարանիք օգնութիւն խնդրելէ ձեր ընկերներէն: Ըն-տանեկան հարց մը պիտի յաջողիք լուծել ձեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ: Ձեր ջիղերուն տեր եղէք եւ շուտով մի՛ գայրաւաք:

Ծովանուշ (21 յունուարէն 19 փետրուար)

Ձեր ընտանիքի անդամներէն մէկուն առողջական հար-ցով պիտի մտահոգուիք: Վարչական դժուարութեան մը պի-տի հանդիպիք ձեր պետական մէկ թղթածրարը պատրաս-տելու ընթացքին:

Ձուկ (20 փետրուարէն 20 մարտ)

Մեծ յարթեանկ մը պիտի արձանագրէք եւ անով ուրիշ-ներուն ուշադրութիւնը պիտի գրաւէք: Դրական շրջան մըն է, գայն լաւապէս օգտագործեցէք:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Ափրիկեան երկիր - Մաւրիէ:
2. Ծիչ, պոռչտուր - Անասուկի բաց բերան:
3. Դոնդող - Նայուածք:
4. Հեռու - Թրծուն, կրկնէփ:
5. Մարդաբնակ - Տառի մը անունը:
6. Իսլամական տօներէն - Մեծ մայր:
7. Միխիթարեան բազմավատակ հայրերէն - Հով:
8. Պագաթ - Յորդանան:
9. Տարածքի միաւոր - Չուարթ - Սրուակ:
10. Տրային տարածք - Ընծիւղ - Սիամաւթոյի ծննդավայրը:
11. Չրադաշտական կրօնը - Խազուր:

ՈՐԴԱՅԱՅԵԱՑ

1. Սաւան, անկողինի ծածկոց:
2. Ս. գրային մարգարէ - Վեստդդերու թագաւոր:
3. Ունայնամիտ, դատարկամիտ - Այբուբենէն:
4. Փափաք, ցանկութիւն - Սթերք:
5. Յուցական ածական - Վերջ, աւարտ:
6. Շագանակ - Ստամոքսի սուր ցաւ:
7. Կրկնուած բաղաձայններ - Լեցուն:
8. Արական անուն - Կշիռ, ծանրութիւն:
9. Ծշմարիտ - Դազարոսի եւ Մարթայի քոյրը:
10. Ուղեղի երրորդ թանձրագոյն մաշկը:
11. Տառի մը դրացիները - Արաք իշխան - Պետրոս Դուրեանի քերթուածներէն:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

2			6		
5	7	9	8	3	
					2 1
		5	7		
					3 6
9 3		6			
8	3	9			7
	1			8	
6	7				5

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱԽՈՐՎ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՎԵՐՈՒՆ ԼՈՒՑՈՒՄՆԵՐԸ

1969 - 2019

20 ՅՈՒՆԻՍ

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՆՈՒԹԵՐ ՈՒ ՆԵՏԵՐ

ԿԵԱՆՔԻ ՈՒ ՄԱՅՈՒՄԱՆ ԽԱՂԵՐԵՆ

Սիւնասիկ՝ պատմութիւնը լուրի մը, որ իրական է, դժբախտաբար, մէկու մը համար, ու իրական է, բարեբախտաբար, ուրիշի մը համար: Յաճախ մէկու մը դժբախտութիւնով կը շին-ւի ուրիշի մը կատարեալ բախտը:

Եւ ահաւասիկ այդ աւետաբեր ու աղետաւոր պատմութիւնը՝ այդ լուրին: Տիգրան Տիգրանեան անուն ազգային մը, երեկոյ մը, ըմպելարանի մը մէջ, երկու ախորժա-բեր ըմպելէ ետքը, հաշիւը վճարած ատեն կը գնէ նաեւ ֆրանսական ազգային վիճակահանու-թեան տոմսերն հաւտ մը ամբողջութեամբ՝ վճարելով երեսուն սոր ֆրանք:

Սեղանակիցներէն անգործ ու անկուտի Միկաս Մարգարեանը իր ծոցատետրին մէջ գրեթէ գաղտնաբար՝ կ'արձանագրէ Տիգրանեանի տոմսին թիւը:

Հիկզ օր անցած աղքատ Դազարոս Միկասը գիտէ, թէ վիճակահանութիւնը քաշուած է, ու կը փութայ թերթ մը գնել՝ շահող թիւերու ցանկին մէջ փնտռելով թիւը Տիգրանին: Եւ յուզումով ու ցնծութեամբ կը տեսնէ՝ որ Տիգրան շահած է տասը միլիոն: Աչքերուն չի հաւատար: Կը գնէ ուրիշ թերթ մը՝ վախճալով տպագրական սխալ է: Այդ թերթին մէջ ալ՝ նոյն թիւը: Կը ցատկէ հանրակացոց մը՝ երթալու համար Տիգրանին խանութը, վստահ ըլլալով, որ բախտաւոր բարե-կամը անտեղեակ է, որ երկինքէն իրեն համար ինկած է գանձ մը: Միկաս կ'ուզէր ինչ ըլլալ առաջին աւետաբերը՝ պզտիկ նուէրի մը ակնկալութեամբ:

Կը գտնէ Տիգրանեանը խանութին խորը նստած, ծխելով անտարբերօրէն:

Միկաս կը հասկնայ, որ Տիգրանը բանիկէ մը լուր չունի: Կ'ուրախանայ ու ոգեւորութեան նոպայի մը մէջ, խելացնոր վիճակով, բարձրադաղակ կը պոռայ՝ խնթաքացածի մը տպաւորու-թիւնը տալով.

- Էե՛հ, հե՛յ, հե՛յ, հե՛յ...
Բարեւ, արե՛ւ, ոսկի անձրեւ... Մեծ աւետիս ունիմ տալիք...
Տիգրանեան համոզուած է, որ Միկաս եկած է քիչ մը դրամ ուզելու: Հեգնօրէն կը հարցնէ.
- Ո՛վ ծնած է, ո՛վ ամուսնացած է, ո՛վ մեռած է...
Միկաս ալ իր կարգին կը հարցնէ.
- Սա անցեալ իրիկուն գնած վիճակահանութեան տոմսդ աղէկ պահա՞ծ ես...
- Գրպանս է. ի՞նչ կայ որ...
- Ուրեմն գիտցիր, հե՛յ... Տասը միլիոն շահած ես:
Տիգրան կատակին կատակով պատասխանելով՝ կ'ըսէ.
- Հարկաւ մատդ մէջն է:
Ա՛հ, մատիկիս ծայրիկը սանկ քիչիկ մը եթէ մէջը ըլլայ, ինծի կը բաւէ... Տասը միլիոն է աս, պապաս...

- Է՛, քանի որ այդպէս է, կեսը քեզի կը նուիրէմ:
- Մ'ըսէր, Տիգրանիկ, մ'ըսէր, կը խնթաքցնէ գիս:
- Մարդ բանի՞ անգամ կրնայ խնթաքանալ:
- Իրա՛ւ կ'ըսես... Կեսը ինծի՞...
- Բացարձակապէս:
- Չե՛ս կատակեր:
- Դրամի հետ կատակ կ'ըլլա՞յ...
- Կ'երկոն՝ս...
- Ինչի վրայ որ ուզես:
- Կը նետես կոր:
- Նետածս բռնէ, յիմա՛ր:
- Ուրեմն կեսը ի՞մա է: Մեղք եմ, շիտակ ըսէ:
- Տօ՛, դուն խօսք կը հասկնա՞ս... Զանի՞ անգամ ըսելու եմ:
- Ուրեմն շահածդ կեսը կ'առնես, միւս կէսն ալ, այսինքն հիկզ միլիոն, ինծի՞ կու տաս:
- Աւելի չէ, բայց կեսը կու տամ:
- Հիկզ միլիոն է կեսը:
- Հիկզ միլիոն, եթէ շահածս տասը միլիոն է:
Ծակտապարկանօրէն Տիգրան կը շարունակէ այս կատակը առանց հաւատալու՝ որ Մի-կաս Մարգարեանին ըսածը կրնայ ամբողջովին իրական ըլլալ:

Միկաս, միշտ թերահաւատ, կը հարցնէ.
- Խօսքդ իսո՞ցք է:
- Խօսքս խօսք է, գործս ալ գործ է: Ես օր մը օրանց սուտ խօսա՞ծ եմ...
- Ո՛չ, ատանկ բան մը չեմ յիշէր: Օր մը օրանց քու սուտ խօսիլդ չեմ լսած:
- Զանի որ ստախօս չեմ, ուրեմն ճշմարտախօս եմ:
- Ըսել է՝ հիկզ միլիոնի տեր պիտի ըլլամ: Բայց դուն ան ըսէ, որ ինչո՞ւ հիկզ միլիոնը կը նուի-րես ինծի:
- Զեչֆիս Զեհեա՛ն ես... Ազատ չե՛մ: Սա նայեցէք, պարոնին թէ՛ հիկզ միլիոն պիտի տամ, թէ՛ բացատրութիւն... գուցէ դուն իմ նուէրիս մէջ ստորին նպատակ մը կը տեսնես...
- Զմա՛յք մըն է...
- Զմայք է, քրիստոնէութիւն է, քեզի՞ ինչ... Մ'լ սկսար գլուխ ուռեցնել:
- Ուրեմն լոյսօրէն, պարկեշտօրէն, եղբայրաբար ինծի կը նուիրես շահած տասը միլիոնիդ կէ-սը, որ կ'ընէ հիկզ միլիոն...
- Աստուա՛ծ վկայ, դուն խնթաքացած ես...
- Հաւատալո՛ւս համար...
- Տօ՛, չէ, շիտաւալուղ համար:
- Ա՛հ ուրեմն թերթերը, ու նայէ շահող թիւերուն ցանկը...
Միկաս կ'երկաւթ թերթերը, որոնցմէ մէկը ձեռքէն կ'իյնայ գետին...
Կը ծռի, որ վերցնէ...ճիչ մը... ձեռքը կը տանի սրտին... Վար կ'իյնայ...
Սեռած էր Միկասը...

Տիգրանեան կատարել տուաւ Միկասի յուզարկաւորութիւնն ու թաղումը:
Իրապէս շահած էր տասը միլիոնը, որուն կեսը խոստացած էր Միկասին՝ սուտով, կատա-կով: Միկաս մարդ մարդասանց չունէր, որով հիկզ միլիոնը, որ տակաւին տրուած կամ տրուե-լիք չէր, ժառանգէց Տիգրանեան, որ եղաւ Միկասին կեանքին դէմ դաւաղող ու մահուողիս բարե-րարը:

Միկաս Մարգարեան մեռաւ միլիոնատեր: Վայրկեան մը հաւատաց, որ եղած է միլիոնա-տեր. իսկ Տիգրան, որ արդէն միլիոնատեր է, դարձաւ բազմամիլիոնատեր:
Անգործ, անկուտի, դժբախտ Միկաս հոգին աւանդեց երջանիկ մահով:
Կեանքն ու մահը երբեմն կը դաշնակցին՝ դժբախտի մը գլխուն խաղ մը սարքելով...

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՍԱՆՇԵԱՆ

... «ՄԵՐ ՍԶԱՆՉԵԼԻ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ»

Արեւմտահայ լեզուն՝ մէկը արեւմտահայերու կերտած մեծագոյն իրաշալիքներէն, իր կազ-մութեան առաջին իսկ շրջանին Մեծաքսնչ հռչակուեցաւ ու դարձաւ քոյրորին պաշտամունքի աարկեան, բանաստեղծութիւնը, հոգեկան, կեցուցիչ ստուղբ:

Պատմութեան եւ հայ հոգիին հետ յարաբերութեան մէջ մտնելու պարզ միջոցէն վեր բան մը համարուեցան անիկա առաջին իսկ օրէն, ըստ ինքեցի գեղեցկութիւնի մը, ազգին լաւագոյն տարները իր կախարդանքին մէջ առած շալլայ արարչապատգանքին մը:

Ինքը տաղերու ծնուցիչ ՝ տաղերու նիւթ դարձաւ ապա, մեծեր խմորեց, մեծերու հետ մեծ-նալով կրկին՝ գանձեր բաշխեց ամենուն՝ աւելցնելով գանձային իր պարեմութիւնը ամեն հանգըր-ւանի, սերունդէ սերունդ

ՆԱԽԱՐԱՐ ԺԸՊՐԱՆ ՊԱՍԻԼ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՔՐԱՄ ՀԱԼԱՊԻՆ



Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժըպրան Պասիլ նախարարութեան իր գրասենեակին մէջ (Պուսթրոս պալատ) ընդունեց Լիբանանի պաշտօնակալի ֆետերասիոնի նախագահ Աքրամ Հալապին:

Այս հանդիպումին ընթացքին նախարար Պասիլ շնորհաւորեց Հալապին, որ վերջերս ընտրուեցաւ Ասիոյ պաշտօնակալի ֆետերասիոնի Ա. փոխնախագահ:

Նախարարը յաջողութիւն մաղթեց Հալապին՝ իր նոր պաշտօնավարութեան գծով:

Հանդիպումին ընթացքին ընկերակցեցան նաեւ պաշտօնակալի գծով այլ հարցեր:

●ԱՅԼ ԳԵՏՆԻ վրայ, Աքրամ Հալապի շաբաթ, 22 յունիսին, յետմիջօրէի ժամը 15:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 18:00, պիտի ընդունի շնորհաւորութիւններ, Ռապուէի շրջանին մէջ գտնուող «Լիքաա» պանդոկին մէջ (յոյն կաթողիկէներու պատրիարքութեան մօտ):

ՊԱՍՔԵԹՊՈԼ. 16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆ - ԱԼՃԵՐԻԱՎ՝ 88-52



Լիբանանի 16 տարեկանէն վար տղոց պաշտօնակալի ազգային խումբը մեծ եւ տպաւորիչ յաղթանակով մը սկսաւ Արաքական պաշտօնակալի ախոյեանութիւնը, երբ Եգիպտոսի մայրաքաղաք Գահիթէի մէջ բաւական ծանր պարտութեան մատնեց Ալճերիան՝ 88-52 արդիւնքով:

Լիբանանէն ամենէն շատ կէտը նշանակեց Զարլ Զը-գահի (35), ապա՝ Եուսէֆ Խայեթ (27):

Լիբանանի յաջորդ մրցակիցները պիտի ըլլան Եգիպտոս, Պահրէյն, Թունիզ եւ Սեուական Արաբիա:

ՍԱԹՑ ՀԻՄՆԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏ

Գերմանացի յետսապահ Մաթթ Հիւմելս Պալերն Միւնիխէն վերադարձաւ իր նախկին ակումբը Պորոլսիա Տորթմունտ, յայտնեց վերջինիս պաշտօնական կայքը:

Կողմերը արդէն իսկ համաձայնութեան եկած են 30 տարեկան ֆուլբալիստին փոխանցման մանրամասնութիւններուն գծով: Սակայն ցարդ յաւելեալ մանրամասնութիւններ չեն ներկայացուիր:

Ան 2016-ին Տորթմունտէն տեղափոխուած էր Պալերն Միւնիխ:



Ս. ՀՈՒԲՄԻՄԵԱՆՑ ԵՒ Ս. ԳԱՅԵԱՆԵԱՆՑ ԿՈՅՄԵՐՈՒ ՏՕՆ

Հանդիսապետութեամբ
ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Լիբանանի հայոց առաջնորդ

Շաբաթ, 22 յունիս 2019, երեկոյեան ժամը 6:00, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցի, ժամերգութիւն, սուրբ Կոյսերու մատուցելով թափօր, սուրբ պատարագ եւ ջրօրինեց

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ՀՈԳՇ. Տ. ԱՆԱՆԻԱ Ծ. ՎՐԴ. ԳՈՒՃԱՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ հայորդիները՝ մասնակցելու եկեղեցական արարողութիւններուն եւ սրբօրհներուն բարեխօսութեամբ ստանալու Աստուծոյ օրհնութիւնը:

**ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՅ**

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեւաւորելու եւ ընդունելութիւններու համար «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազդակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260 115-241274, երկուշաբթիէն ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԽԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱԶԷ ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ԱՒԵՏԻՍ ԿԻՏԱՆԵԱՆԻՆ

Երեկ՝ չորեքշաբթի, 19 յունիսին, զբօսաշրջութեան նախարար Անտիս Կիտանեան նախարարութեան իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահ Վաշէ Ծատուրեանը:

Այս հանդիպումին ընթացքին Ծատուրեան նախարարը տեղեակ պահեց այն բոլոր նախապատրաստական աշխատանքներուն մասին, որոնք կը տարուին ֆետերասիոնին կողմէ՝ լաւապէս հիւրընկալելու համար Լեւնային հեծելարշաւի (Մաուրըն Պալը) ասիական 25-րդ ախոյեանութիւնը, որ տեղի պիտի ունենայ 25-28 յուլիսին, Զֆարգէպիանի շրջանին մէջ (Զետուան)՝ հսկողութեամբ Ասիոյ հեծելարշաւի ֆետերասիոնին, կազմակերպութեամբ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին եւ հովանաւորութեամբ «Սըրթ» ընկերութեան:

Ծատուրեան յայտնեց, որ այս ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն արեւի քան երկու հարիւր երկսեռ մարզիկներ, որոնք պիտի ժամանեն ասիա-



կան 15 երկիրներ:

Նախարար Կիտանեան ըսաւ, թէ իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ այս ախոյեանութեան, եւ Լիբանան ժամանող ասիական պատուիրակութիւնները պիտի դիմաւորէ անձամբ:

Նախարարը անցնուց, որ այս ախոյեանութեան լիբանանցի մարզիկներուն կը մաղթէ յաջողութիւն, մանաւանդ որ մրցումին արդիւնքներուն լոյսին տակ յաղթականները պիտի մասնակցին Թոքիո-2020-ի ամառնային ողիմպիական խաղերուն:

ԵՌՎԵՆԹՈՒՄ 140 ՄԻԼԻՈՆ ԵՐՈ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՓՈԿՊԱՅԻ ՀԱՄԱՐ

Իտալիոյ ախոյեան Եուվենթուս 140 միլիոն եւրօ առաջարկեց Մանչեսթըր Եունայթըտին՝ ձեռք ձգելու համար անոր ֆրանսացի միջնապահ Փոլ Փոկպան:

Նախապէս Փոլ Փոկպա մաս կազմած է Եուվենթուսին՝ 2012-2016 ժամանակամիջոցին:

26 տարեկան Փոկպա Եուվենթուսի հետ կատարած է 127 մրցում՝ նշանակելով 34 կոլ:

Իտալական մամուլին համաձայն, Եուվենթուսի **թեք-**

նիք տնօրէնին՝ Ֆապիօ Փարաթիչի եւ անգլիական ակումբին պատասխանատուներուն միջեւ հանդիպումը եղած է բաւական դրական



ՌՈՏՐԻԿԵԶԻ ՆԱՓՈԼԻ ՏԵՐԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ՝ ՄՕՏԱԼՈՒՄՏ

Միջազգային մարզական մամուլին համաձայն, շատ հաւանական է, որ յառաջիկայ օրերուն Ռեալ Մատրիտի քոլումպիացի միջնապահ Խամես Ռոտրիկեզ փոխ տրուի «Զալցի»-ի ախոյեանութեան մասնակցող խումբերէն Նափոլին:

Ռոտրիկեզով մօտէն հետաքըքրուած է Նաեւ Մանչեսթըր Եունայթըտ:



«ԶՈՓԱ ԱՄԵՐԻԷԱ»

ՊՐԱԶԻԼ ԶԿՐՑԱՒ ՅԱՐԹԵԼ ՎԵՆԵԶՈՒԵԼԼԱՅԻՆ

Պրագիլի մէջ շարունակուող «Զոփա Ամերիքա»-ի ֆուլբալի մրցաշարքին ծիրին մէջ, հիւրընկալ երկիրը՝ Պրագիլ, որ մաս կը կազմէ Ա. խմբակին, չկրցաւ յաղթել իր մրցակիցին՝ Վենեզուելային՝ անոր հետ արձանագրելով 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը:

Պրագիլ այժմ ունի 4 կէտ, մինչ Վենեզուելլա, որ արձանագրեց իր երկրորդ հաւասարութիւնը, ունեցաւ 2 կէտ:

Նոյն խմբակին մաս կազմող Փերու, որ յաղթեց Պոլիվիոյ, այժմ Պրագիլի նման ունի 4 կէտ:

Պոլիվիա ցարդ իր կատարած երկու մրցումներուն ալ պարտութիւն կրած է:



ԱՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00 Զայլերգներ / Բարի լոյս
7.15 Սփիւռքեան մեղմ երգեր
7.30 Բարեւ
8.30 Լուրեր
9.00 Բարեւ հարցազրոյց (ձեւագէտ՝ Նարալի Զեֆթեանի հետ)
9.30 Բարեւ հարցազրոյց
10.00 Նոր երգեր
10.30 Հայկական աշխարհի լուրեր
10.45 Ծուռ Նստիք, շիտակ խօսիք (տարեւորականի նիւթերու արժեւորման գոյց)
11.00 Արդի մշակուած ժողովրդային երգեր
11.30 «Երգ երգոց»-ի երգեր
12.00 Խանդավառ երգեր
1.00 Ազգային-հայրենասիրական երգեր
1.30 Լուրեր
1.45 Յեղափոխական երգեր
2.30 ԳՈՅԱՐ համոյթ կատարումներ
3.00 Զլլ եմ պիյմու (Նիւթ)՝ գեղար-

ւեստական, հիւրեր՝ Թոնի եւ Պասիմա Զիուէն)
4.00 Խանդավառ երգեր
4.30 Օ.Թի.Վի.ի հայերէն լուրերու ուղղակի սփռում
4.50 Խանդավառ երգեր
5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան
5.30 Հայ թեք.
6.00 Նոր երգեր
6.30 Լուրեր
6.50 Ժողովրդային երգեր
7.00 Եկեղեցին հայկական
8.00 Օրուան երգիչ (Լեւոն Գաթրճեան)
8.30 Եսդրատային ճոխ երգեր
9.00 Juke Box
9.30 Հայկական աշխարհի լուրեր (ըրկ.)
9.45 Հեղինակային երգեր
11.00 Ամուսններ
12.00 Յեղափոխական երգեր
1.00 Հայերէն այլազան երգեր
6.00 Հայկական երաժշտութիւն

«Վանայ Զայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժինին մէջ (voiceofvan.net):

ԼԻԲԱՆԱՆԻ ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ ՄՐՑԱՇՆԱՐՔԵՐՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏՐՈՒԵՑԱՆ



Ներկայութեամբ իր անդամներուն մեծամասնութեան, Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնը ժողով մը գումարելով ընկարկեց իր օրակարգին վրայ եղող հարցերը եւ տուաւ համապատասխան որոշումներ:

Հաւանութիւն տրուեցաւ, որ «Լուիս Պազ Սփորթ Էստ Իվենց» ընկերութիւնը կազմակերպէ մրցաշարք մը, որուն պիտի մասնակցին ֆետերասիոնին մօտ արձանագրուած, ինչպէս նաեւ անկախ մարզիկները: Մրցաշարքը տեղի պիտի ունենայ 2-8 դեկտեմբերին, Մոն լա Սալի մէջ (Այն Սաատ):

1-3 յուլիսին տեղի պիտի ունենայ Փաթրիք Ասաֆի անուան 15-րդ մրցաշարքը, ժամուրդ ակումբին մէջ:

3-9 սեպտեմբերին Մարոքի մէջ տեղի ունենալիք Արաբական ակումբներու 31-րդ ախոյեանութեան, Լիբանանի ներկայացուցիչները պիտի ըլլան ախոյեան ժընուպ Թուլ, փոխախոյեան Լիուա Սայտա (տղաք), ախոյեան Նատուա Զամաթի (ախոյեան) եւ փոխախոյեան ՀՍԸՄ Պէրուլ (աղջիկներ):

Ֆետերասիոնը սկզբունքային հաւանութիւն տուաւ, որ Լիբանան իր մասնակցութիւնը բերէ Իստոնեգիոյ մէջ 15-22 սեպտեմբերին տեղի ունենալիք Ասիոյ ախոյեանութեան, անշուշտ եթէ կարելի ըլլայ տղոց եւ աղջկանց խումբերուն նիւթական ծախսերը ապահովել:

Յայտարարուեցաւ նաեւ, որ Լիբանան պիտի հիւրընկալէ (14-15 դեկտեմբերին) միջերկրականեան խաղերու փինկ փոնկի ֆետերասիոնի համագումարը:

ՖՈՒԹԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐԹԵՑ ԻՏԱԼԻՈՅ (2-1)



Իտալիոյ մէջ տեղի ունեցած ֆութսալի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, Հայաստանի ազգային հաւաքականը 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց դաշտին տիրոջ դէմ:

Կողերը նշանակեցին Էնրիքէ Զոսթա տա Սիլվա եւ Սաբո Գալստեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՌՈՒՄԵԱՆ ՅՈՎԱՍԵՓԵԱՆ ՀԵՌԱՅԱՒ ՓԻՆԻԿԵՆ



Հայաստանի ֆութսալի ազգային հաւաքականի միջնապահ Ռումեան Յովսէփեան հեռացաւ Փիւնիկէն, յայտնեց երեսնեան ակումբին մամուլ քարտուղարութիւնը:

«27 տարեկան միջնապահ Ռումեան Յովսէփեան այսուհետեւ Փիւնիկի ֆութսալիստ չէ: Անոր պայմանագրութեան ժամկէտը աւարտեցաւ մեզի հետ», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Փիւնիկ շնորհակալութիւն յայտնելով Յովսէփեանին, անոր յաջողութիւն մաղթեց յառաջիկային իր մաս կազմելիք ակումբին հետ:

Շատ հաւանական է, որ ան ֆութսալիստի իր արիեստավարձ ասպարէզը շարունակէ արտասահմանի մէջ:

ՌՈՊԵՐԹ ՄՈՐԵՆՕ՝ ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՆՈՐ ՄԱՐԶԻՉ

Սպանիոյ ֆութսալի ֆետերասիոնը պաշտօնապէս յայտարարեց, թէ Ռոպերթ Մորենօ նշանակուեցաւ Իտալիոյ ֆութսալի ազգային խումբի նոր մարզիչ:

Լուիս Էնրիքէի տուած հրաժարականէն ետք, 41 տարեկան Մորենօ ստանձնեց անոր պաշտօնը:

Ան արդէն իսկ քանի մը մրցում գլխաւորած էր Սպանիոյ ազգային խումբին հետ: Ան Էնրիքէի օգնականն էր: Էնրիքէ անձնական պատճառներով բացակայ էր ազգային խումբէն:

Եւրօ-2020-ի ֆութսալի ախոյեանութեան զտումի մրցումներուն ծիրին մէջ, 2. խմբակին մաս կազմող Սպանիա ցարդ կատարած է չորս մրցում եւ արձանագրած նոյնքան յաղթանակ:

ԱՃՐՊԵՅՃԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՏ ՄՊԱՌԱՉԻՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԱՐՏԱԴՐԷ

Ազրայեյանի պաշտպանական արդիւնաբերութեան նախարարութիւնը եւ օդուժի, ռազմական եւ ծովային կիրարկման տեղեկատուական համակարգեր արտադրող «Թալէս Կրուփ» միջազգային արդիւնաբերական խումբը հաւանաբար միացեալ գործարան հիմնեն: Այս մասին կը հաղորդէ ազրայեյանական «Մինվալ» կայքը:

Խօսքը յայտնաբերման եւ տեղորոշման համակարգերու տարբեր տեսակներու արտադրութեամբ զբաղող գործարանի մասին է:

Տեղեկութեան համաձայն, «Թալէս Կրուփ»-ի ղեկավարութեան հետ քննարկումները վարած է ազրայեյանական նախարարութեան ներկայացուցիչ Ֆարուխ Վեզիրով՝ Ֆրանսայի մէջ «Փարիզ Էր Շօ-2019»-ի ծիրին մէջ:

Ան նաեւ հանդիպում ունեցած է ֆրանսական «Նեքսթեր»-ի ղեկավարութեան հետ, քննարկուած է Ազրայեյանի գործարաններուն մէջ պաշտպանական նշանակութեան ապրանքներ, նաեւ սպառազինութիւն արտադրելու հարցը:

ԲԱՅՈՒՄ՝ «ԱՉՂԱԿ»-Ի...

Շարունակուած 3-րդ էջէն



ամբողջ, ինն են սպանդն ու վերապրումը, տարագրութիւնն ու վերամիացումը, յարութիւնն ու վերընձիւղումը: Ստեղծագործութիւններուն մէջ գրաւիչ ձեւով ու հետաքրքրական ներկայացմամբ կ'երեւին մարդոց առօրեան, աշխատանքը, հեշտու կեանքէն պատկերներ, նաեւ՝ մարդկային ամենէն նուիրական զգացումներ:

«Ազդակ»-ի ընտանիքին անունով բարի երթ կը մաղթենք երիտասարդ նկարիչին՝ հաւատալով, որ ան կանգ պիտի չառնէ այս առաջին ցուցահանդէսով: Այստեղ յայտնենք, որ այս ցուցահանդէսը կը յատկանշուէր մանաւանդ մեծաթիւ երիտասարդներու ներկայութեամբ:

Ցուցահանդէսը բաց պիտի մնայ մինչեւ շաբաթ օր՝ նոյն վայրին մէջ, կեսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

ՄԱՆՈՅԵԱՆ ԿԱՐԵՒՐ ԿԸ ՆԿԱՏԷ...

Շարունակուած Ա. էջէն

«Ա1+» լրատուականը այս մասին գրուցած է ԴՅԴ Բիւրոյի անդամ, Դայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեանի հետ:

«Պետք է ըսեմ, որ բաւական դժուար պատասխանատուութիւն է՝ նախ հաշուի առնելով, որ ընդհանրապէս նոր կը ձեւաւորուին գրասենեակը եւ գործառնութիւնը» ըսած է Մանոյեան՝ անդրադառնալով յանձնակատարի նշանակ-

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Վարչապետ Սաատ Դարիւրի իր կարգին ընդունեց ռուսական նախագահական պատուիրակն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը:

Վարչապետարանին մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններն ու գաւտնք ամրապնդելու հեռանկարները:

ՊԱՍԽԻՒ ՍՕՏ

Ռուսական պատուիրակութիւնը այցելեց նաեւ Պուսթրոս պալատ, ուր ընդունուեցաւ արտաքին գործոց նախարար Ժըպարան Պասիլի կողմէ:

Հանդիպումէն ետք Լաւրենթիւս յայտնեց, որ Պասիլի հետ համաձայնած են լիբանանեան-ռուսական յարաբերութիւնները, ինչպէս նաեւ միացեալ շահերը ամրապնդել:

Ան յայտնեց, որ քննարկած են միջինարեւելեան իրադարձութիւնները՝ ի մասնաւորի կեդրոնականով Սուրիոյ տագնապին վրայ եւ ընդգծելով Սուրիոյ մէջ ապահովական կայունութիւնը վերահաստատելու անհրաժեշտութիւնը:

Պասիլ Նշեց, որ Լիբանան հաստատած

ՆԱԽԱԳԱՅ ԱՌՆ ԱՍԹԱՆԱՅԻ...

Շարունակուած Ա. էջէն

Է, թէ պիտի մասնակցի Աթանայի խորհրդրդածողովին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ ամսուան վերջերուն:

Լաւրենթիւս նկատել տուաւ, որ իրենք քննարկած են նաեւ սուրիացի տեղահանուածներու տունդարձի հեռանկարները՝ ընդգծելով, որ ամէն ջանք ի գործ պիտի դնեն այդ ուղղութեամբ առաջադրուած ռուսական նախաձեռնութիւնը ամրապնդելու եւ բոլոր կողմերուն հետ գործակցելու, ինչպէս նաեւ տեղահանուածներու տունդարձը լաւապէս կազմակերպելու:

Ան աւելցուց, որ այս իմաստով իրենք միջազգային ընտանիքէն եւս պահանջած են սուրիացի տեղահանուածները վերադարձնել իրենց երկիրը: «Պատրաստ ենք ամէն ջանք ի գործ դնելու, որ Լիբանանի հետ մեր յարաբերութիւնները աւելի եւս ամրապնդուին», ըսաւ Լաւրենթիւս:

Ան Նշեց, որ Պասիլի հետ քննարկած են նաեւ Լիբանան-Իսրայէլ սահմանագծովի թղթածրարը, սակայն չեն խորացած մանրամասնութիւններուն մէջ, որովհետեւ իրենց համար կարեւոր է, որ նման համաձայնութիւն գործադրուի՝ նկատի ունենալով Միջին Արեւելքի կայունութեան վրայ ունենալիք անոր դրական ազդեցութիւնը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ Ե ԽԱՂԱՂ...

Շարունակուած Ա. էջէն

Հայաստանի արտաքին գործոց նախարարութենէն յայտնած են, որ նախապատրաստական այս հանդիպումին ընթացքին գրուցակիցները գնահատած են խաղաղ հոլովոյթին ներկայ իրավիճակը՝ նախկին հանդիպումներուն ձեռք բերած պայմանաւորուածութիւններու իրականացման պարունակին մէջ:

Հանդիպումին նախօրեակին, Միացեալ Նահանգներու նախագահի Ազգային անվտանգութեան հար-

ցերով խորհրդական Ճոն Պոլլըն անդրադարձած է Հայաստանի եւ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարներուն հետ տեղի ունենալիք հանդիպումին:

«Անհամբեր կը սպասեմ շաբաթավերջին Հայաստանի եւ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարներուն հետ հանդիպումներուն, որպէսզի խրախուսեմ անոնց միջեւ երկխօսութեան շարունակութիւնը: Միացեալ Նահանգներու պատրաստ են աջակցելու

շրջանին մէջ խաղաղութեան հարցի յառաջխաղացքին», «Թուիթթըր»-ի իր էջին վրայ գրած էր Պոլլըն:



General Aram Sulukjian
(1919-1979)
in the Service of Lebanon

A Presentation by
Vasken Sulukjian

Tuesday, June 25 at 7:00 p.m.
Haigazian University Auditorium
Organized by the Armenian Diaspora Research Center





**Քամակգայինի
Մ. եւ Բ. Արսլանեան ձեմարան**

**Քերմէս -
ընդհանրական
երեկոյ**

Շաբաթ, 22 Յունիս 2019-ին՝ կէսօրէ երբ ժամը 3:00-էն սկսեալ եկէջ ուրբենէ, խմենէ, խաղանէ եւ միասնաբար Բաճեյի ժամանակ անցընենէ ձեմարանի յարկին Գրալ:

- Աշակերտական երգի եւ պարի ելոյթներ (ժամը 6:00-էն 8:00)
- Աշակերտական ցուցահանդէս (ժամը 7:00-էն 9:00)
- Մանկական խաղերու կրպակներ
- Bingo
- Պարելիճի կրպակներ (խորոված, զովպուրիչ, «սած», կարկանդակ...)
- Անանկակալներ



**ՊԱՂԱՍԵՆՔ ՀԱՅ ՄՇԱՆՈՅԸ...
ԱՊՐԻՆՔ ՀԱՅ ՄՇԱՆՈՅԸ...
PRESERVE THE ARMENIAN CULTURE... LIVE THE ARMENIAN CULTURE**

**21 ՅՈՒՆԻՍ
JUNE**

**ԱՐԲԻ ԱՐԲԻՆ - ԳՈՐԻՔ ՀԱՄՈՍԻ
ARINE CENTER - BOURJ HAMMOUD**

5:00 PM

**ՀԱՅԱՍՏԱՆԻԱՆ ԿԱՐԵՒՐ ԵՒ ՍՈՒՐԱՍ ՄՇԵԷՐԻ
WITH THE PARTICIPATION OF GAREN AND MOURAD MSHEHRI**

**ՑՈՒՑԱՐԱՆՈՒՄ
EXHIBITION**

**ԵՐՈՒՐ
MUSIC**

**ՀԱՅԱԿԱՆ ՃԱՆԵՐ
ARMENIAN FOODS**